

ՎՈՒՄ-1
ՔԻ-2

ԿՈՊԱԶԻՆՍԿԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՅՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1932

338.14

4-73

ՔԱՂՅԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՔԱՂՀԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

«Նրանից հետո, յերբ մենք լուծեցինք պե-
տական և կոլեկտիվ խոշոր տնտեսություն ըս-
տեղծելու խնդիրը, պետք է բուլժեվիկոբեն անց-
նել բարձր բերք ստանալու խնդրի լուծմանը
— գյուղատնտեսական գիտության բոլոր նը-
վաճումների կիրառման հիման վրա»:

Յա. Յակովլևի

Շարքահերկ—տեխնիկական բույսերի բերքը բարձրաց-
նելու համար քաղհանային աշխատանքները վճռականորեն
կուլթյուն ունեն: Դրա համար քաղհանային կառավարի
հիշտ կազմակերպումը և քաղհանը ժամանակին կատարելը
պետք է հանդիսանա վորպես կոլտնտեսությունների կենտրո-
նական խնդիր—գարնանացանի կատարումից հետո:

Շարքահերկ—տեխնիկական բույսերի բերքի բարձ-
րացման բաղկան շոշափելի որինակ, վորպես դաշտային աշ-
խատանքները, հատկապես քաղհանը լավ և ավելի կարճ ժամ-
կետերում կատարելու արդյունք ծառայում է Ստալին-Միսկին
նայոնի «Աշխատանք» կոլտնտեսությունը: Շնորհիվ նրան,
վոր այդ կոլտնտեսությունը համեմատած ռայոնի մյուս կոլ-
տնտեսություններին անցած տարի շարքահերկ բույսերի ցան-
քը հինգ որ առաջ կատարեց, իսկ առաջին քաղհանը՝ 7 որ
առաջ, և բոլոր շարքահերկ—տեխնիկական բույսերն յենթարկ-
վեցին բուլժեվիկոբեն քաղհանի, իսկ յերբ կոլտնտեսա-
կաններն էլ 100 տոկոսով դուրս եյին գալիս աշխատանքի
(ռայոնում ընդհանրապես յերկրորդ քաղհանը անց է կաց-
ված հոկտեմբերի 31 թվին): Շարքահերկ—տեխնիկական բույսե-

4602-89

րի վոչ ամբողջ տարածության վրա, այլ այդ տարածության 74 տոկոսը), «Աշխատանք» կոլտնտեսությունում բերքն ընդհանրապես ռալոյնի միջին բերքից բարձր ստացվեց: Դա հայտնի չէ հետեվյալ աղյուսակից.—

Շարքահերկ և տեխնի- կական բույսեր	Մեկ հեկտարի բերքը 1931 թ. (ցենտներով)		Ավելացումը տոկոսներով
	«Աշխատանք կոլտնտեսություն»	Ռալոյնում ընդհանրա- պես	
Յեղիպտացորեն . .	15,0	11,4	31,6
Արեվածադիկ . . .	7,7	5,2	47,3
Գենազերչակ . . .	5,3	3,3	61,3

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր քաղհանային աշխատանքներն ունեն մեծ նշանակություն շարքահերկ-տեխնիկական բույսերի բերքի բարձրացման գործում: Կոլտնտեսային լայն մասսաների մոբիլիզացիան, այդ բույսերին խնամք տանելու համար հատկապես անհրաժեշտ է, նկատի ունենալով տեխնիկական և նոր բույսերի աճադին տեսակարար կշիռն յերկրամասում:

Պլանի համաձայն, կոլտնտեսությունները 1932 թվին պետք է 7,5 միլիոն հեկտար զարնանացան անեն, վորից մոտ 3,5 միլիոն շարքահերկ-տեխնիկական բույսեր են, վորոնք կազմում են ամբողջ զարնանացանի տարածության համարյա կեսը: Անցյալ տարվա համեմատությամբ զգալի չափով մեծանում է այնպիսի թանկագին բույսերի տարածությունը, ինչպես որինակ՝ ծխախոտ, բրինձ, գենազերչակ, նայել յեզիպտացորեն և լոբի ցեղի բույսեր:

Քաղհանային աշխատանքների ժամանակ կոլտնտեսականների գործադրած աշխատանքն զգալի բարձր է լինում: Դրա համար անհրաժեշտ է մեծ ուշադրությունը հաշվի առնել կոլտնտեսությունների անցյալ տարվա վորձը քաղհանի աշխատանքների վերաբերյալ: Կոլտնտեսային գործնական աշխատանքից պարզվում է, վոր յերկրամասի շատ կոլտնտեսություններ չեն կարողացել բավարար անցկացնել քաղհանային կամպանիան: Պարզվել է, վոր անցյալ տարի կոլտն-

տեսությունների ընդհանուր մասսան ուշացրել է քաղհանային աշխատանքների կատարումը և յերկրորդ քաղհանը կատարել է վոչ ամբողջ տարածության վրա:

Առաջին քաղհանն յերկրամասում կատարվել է պլանի հանդեպ մոտ 20 որ ուշ, իսկ յերկրորդը՝ մի ամիս ուշ: Առաջին և յերկրորդ քաղհանի պլանով նշանակած ժամկետներին կոլտնտեսությունները կատարել են առաջին քաղհանի 61 տոկոսը, իսկ յերկրորդ քաղհանի 33 տոկոսը: Այդպիսի վերաբերմունք դեպի թանգարժեք բույսերն արդյունք եր նրանց նշանակություն յերազմապես թերազնաատություն—մի քանի կոլտնտեսությունների կողմից: Մի շարք կոլտնտեսություններում սովորություն է դարձել թանգարժեք բույսերի քաղհանը կատարել արեվածադիկի, յեղիպտացորենի քաղհանի ավարտումից հետո: Տիխորեցկի ռալոյնի «12-րդ Հոկտեմբեր» կոլտնտեսությունում գենազերչակի քաղհանը ժամանակին չկատարելու հետեվանքով 1696 հեկտար գենազերչակի տարածությունից վոչնչացել է 446 հեկտար, կամ 36 տոկոս:

Այդպիսի խոշոր թերությունները կոլտնտեսություն քաղհանային աշխատանքներում—անցյալ տարվա մոլախոտերի հոր դարգացման պայմաններում, վորովհետև մթնոլորտային տեղումներն առատ էին—հիմք դարձան շարքահերկ-տեխնիկական բույսերի բերքի վորոշ իջեցման, հանդեպ պլանի:

Կոլտնտեսությունների հետախուզությունը ցույց տվեց, վոր քաղհանային կամպանիայի թերությունների գլխավոր պատճառները հանդիսանում են մի շարք կոլտնտեսությունների աշխատանքի վատ կազմակերպումը, շատ անգամ գործավարձի ձեվական կիրառումը, կոլտնտեսությունների մի քանի դեկավարների ուղորտունիստական վերաբերմունքը գործավարձի կիրառման նկատմամբ և քաղհանային կամպանիայի նշանակություն թերագնահատումը բերքի բարձրացման գործում, թաղային բրիգադների գոյությունը, աշխատանքների թույլ մեքենացուցումը, կուլակային գիմադրությունը—կոլտնտեսությունները կազմակերպչապես—տնտեսապես ամրապնդելու միջոցառումների նկատմամբ, թույլ բացառարական աշխատանքը և կոլտնտեսային լայն մասսաների թույլ ներգրավումը քաղհանային կամպանիայի հարցերի քննարկման համար, մի շարք կոլտնտեսություններում կոլտնտեսականների վատ յեղքն աշխատանքի, հասակավոր տղամարդկանց անբավարար մասնակցությունը քաղհանային աշխատանքներում և այլն:

Կոլտնտեսային ղեկավարներին խաչատառակ վերաբերմունքի որինակ դեպի քաղհանային կամպանիան կարող ե ծառայել Կրասնոդարի ռայոնի «Դեպի սոցիալիզմ» կոլտնտեսությունը։ Այդ կոլտնտեսությունում առ 20 հունիսի 1931 թիվ շարքահերկ-տեխնիկական բուլսերի առաջին քաղհանը կատարվել է 16 տոկոս ե կոլտնտեսականների յեղքն աշխատանքի ապահովված ե յեղել միայն 50 տոկոսի չափ, մինչդեռ այդ ժամկետին առաջին քաղհանը պետք ե յրիվ ավարտվեր։ Հենց այդ կոլտնտեսությունում գործավարձը այն ժամանակ չեր գործադրվում։

Հետազոտությունը պարզել ե, վոր շատ կոլտնտեսություններ քաղհանային աշխատանքները մինչև այժմ համարում են «կնկա» գործ։ Քաղհանի նշանակությունն այդպիսի թյուր հասկացողությունն հետեւանքով—կոլտնտեսություններին կեկամտեների ավելացման գործում—մի շարք կոլտնտեսություններում հասակավոր կոլտնտեսական տղամարդիկ համարյա չեն մասնակցել քաղհանային աշխատանքներին, ե այդ աշխատանքները կատարել են զլխավորապես կանայք ե պատանիները։ Այդպիսի վերաբերմունքը դեպի աշխատանքները հետեւանք ե յեղել քաղհանային կամպանիայի ոպորտունիստական ղեկավարությունն ե մասսայական աշխատանքի բացակայություն—կոլտնտեսականների միջով։ Ամենաանպատե այդ տեսակետից Կրասնոդարի ռայոնն եր։

«Կոլտնտեսական» գյուղացին չի սիրում վատ տնտեսավարություն, կոլտնտեսական գյուղացին—դա զգաստ մարդ ե, սիրում ե, վոր նրան լավ ղեկավարեն, վոր տնտեսությունը լավ լինի, վոր ճիշտ տնտեսավարեն։ Նրան ամենից շատ հուզում են ե ամբավականությունն առաջացնում հենց այդ կարգի անկանոնությունները։ Այդ բանը հիմնական սնունդ ե տալիս հակախորհրդային, կուլակային պրովակացիաների առաջացման ե թափանցման դեպի կոլտնտեսությունները» (Շերոլդակի ղեկուցումից Յերկրային 7-րդ կուսկոնֆերանսին)։

Ջարդված դասակարգային թշնամու մնացորդներն ոգտագործելով անկանոնությունները կոլտնտեսություններում, ձգտում են այս կամ այն ձեով դուրս բերել կոլտնտեսականներին սխալ ճանապարհի վրա, խորացնել թերությունները կոլտնտեսություններում ե գրանով տնտեսական վնաս հասցնել հզոր զարգացող կոլտնտեսային շինարարության։

Կուլակային տարրերը համախմբելով իրենց շուրջ ավելի հետամնաց կոլտնտեսականներին, ամեն միջոցներով պայքարում են գործավարձի ներմուծման, դիմազրկության վերաց-

ման դեմ, աշխատանքի կազմակերպման սոցիալիստական ձեվերի դեմ, նրանք քարոզում են հավասարեցում, բորբոքում են կոլտնտեսականների մանր սեփականատիրական տրամադրությունները, դրանով նպաստելով կոլտնտեսություններում կազմակերպչական տնտեսական անկանոնություններ առաջանալուն նա ե բերքի ավելացման համար շատ կարեվոր նշանակություն ունեցող քաղհանային աշխատանքների կատարման գործում։

Կոլտնտեսային բոլոր ղեկավարների, բոլոր խորհրդային ե կուսակցական կազմակերպությունների խնդիրն ե՝ մերկացնել կուլակային բոլոր արարքները ե խստագույն հարված տալ կուլակային աղբեցությունն բոլոր արտահայտություններին, մոբիլիզացիայի յեղծարկելով այդ խնդրի շուրջ կոլտնտեսային ամբողջ ակտիվին։

Իներքի պայքարում, տնտեսական-կազմակերպչական ամբապնդման պայքարում կոլտնտեսությունները պետք ե հաշվառեն նախորդ քաղհանային կամպանիայի բոլոր սխալները, վորպեսզի կոլտնտեսային արտադրությունն ճիշտ ղեկավարման, աշխատանքի ճիշտ կազմակերպության հիման վրա, լայն ծավալելով մասսայական աշխատանքը կոլտնտեսականների միջև, ավելի ուժգին խփեն կուլակին, ե կուլակային տրամադրություններին։

Ներկայումս, առաջին հագածակի ավարտական տարում կոլտնտեսությունները պետք ե վերացնեն անցյալ տարվա քաղհանային կամպանիայի բոլոր թերությունները։ Նրանք պետք ե կյանքում կիրառեն կազմակերպչական կարգի բոլոր միջոցառումները, վորոնք կարող են ապահովել քաղհանային աշխատանքների լրիվ կատարումը ժամանակին ե ճիշտ—հասածայն ագրոտեխնիկական կանոններին։ Այդպիսի հիմնավոր միջոցառումների թվին են պատկանում—կոլտնտեսության քրիզադների կազմակերպումն իսկական արտադրական սկզբունքով, լծկանի, գործիքների ե հողի դիմազրկության լրիվ լուծնացումը, աշխատանքների կազմակերպումը գործավարձի սկզբունքով, ներգրավելով կոլտնտեսային լայն մասսաներին օրցմացում ե զարգացնելով հարվածայնությունը։ Բացի այդ, անհրաժեշտ ե քրիզադում մշակել ագրոսլան—կարգադիր ե քաղհանային աշխատանքների վորակային ցուցիչներ, ապահովել աշխատանքների ամենորյա ղեկավարությունն ու հրավողությունը, կազմակերպել աշխատանքների ճիշտ հաշվառում, անցկացնել կոլտնտեսականների միջով մասսայական

աշխատանք քաղհանային կամպանիայի հարցերի շուրջը
և այլն:

ԱՇԽԱՏԱՆԳՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՁԵՎԸ

Յուրաքանչյուր կոլտնտեսություն կազմակերպում է իր արտադրությունն արտադրական—ֆինանսական պլանի համաձայն կազմված ժողովրդական տնտեսության առաջադրությունների վրա: Պետության պլան—առաջադրության հաջող կատարման համար յուրաքանչյուր կոլտնտեսությունը պարտավոր է կազմակերպել համայնացած հողերի ողտագործումը, լծկանը, գործիքները, դասավորել կոլտնտեսականներին արտադրության մեջ այնպես, վոր առավելագույն մեծանա աշխատանքի արտադրողականությունը:

Այդ գործում վճռական նշանակություն է ձեռք բերում աշխատանքի և արտադրության միջոցների (լծկանի, գործիքների) ձիշտ կազմակերպումը: Կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ղեկավարությունը անցկացված կոլտնտեսային աշխատանքի փորձով հաստատված է, վոր աշխատանքի կազմակերպության ամբողջ ձևը հանդիսանում է բրիգադը: Այդ դեպքում կոլտնտեսություններն արտադրական պլանը կատարելու համար բաժանվում են վորոշ մեծությունների աշխատանքի խմբակների—բրիգադների և աշխատանքների կատարման ժամանակ նրանց ամբանում են—հողը, լծկանը, գործիքները և արտադրության մյուս միջոցները:

Սակայն կոլտնտեսությունների մեծամասնությունը բրիգադային ձևով կազմակերպելով իր աշխատանքները, առաջին տարիներում թույլ են տվել մի շարք լուրջ սխալներ բրիգադների կառուցվածքում: Բրիգադները կազմվել են առանց հաշվի առնելու արտադրության միջոցների, հողային տարածությունների չափը և բրիգադի աշխատունակ կոլտնտեսականների քանակը բրիգադի արտադրական առաջադրության համեմատ: Կազմվել են այսպես կոչված թաղամասային բրիգադներ:

Հիկ(բ) Հ. Կովկասի Յերկրկոմի, Յերկրգործկոմի և Յերկրկոլտնտեսության կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրապնդման մասին յեղած վորոշումով առաջարկվում է «ամեն տեղ վերացնել թաղամասային բրիգադները և բոլոր կոլտնտեսություններում անցնել արտադրական բրիգադների»:

Բրիգադների վերակազմումն արտադրական սկզբունքով—կոլտնտեսություններն անց են կացրել յերրորդ բոլշեվիկյան դարնանացանի կամպանիայի նախապատրաստման շրջանում:

Այդ աշխատանքի ստուգումը կոլտնտեսություններում ցույց տվեց, վոր բոլոր կոլտնտեսությունները չեն վերակազմել բրիգադներն իսկական արտադրական ձևով:

Այդ ձևով կազմված բրիգադներն արհեստական ձևով պահելով իրենց մեջ չղտագործված բանվորական ուժը, լիանդարում են կազմակերպված արտադնացություն զարգացմանը, առաջացնում են կուլակային հավասարեցում կոլտնտեսականների աշխատանքի բաշխման գործում, չեն նպաստում մասնավոր սեփականատիրական տրամադրությունների վերացմանը և հետեվաբար, ընդ են տարբերվում նախկին թաղամասային բրիգադներից:

ՎՈՉԵԶԱՅՆԵԼ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բացի աշխատունակ կոլտնտեսականների մշտական կազմից, յուրաքանչյուր արտադրական բրիգադին ամբանում են ամբողջ տարին և բոլոր գյուղատնտեսական ժամանակամիջոցներին արտադրության անհրաժեշտ միջոցներ (լծկան առնասուն, գործիքներ, սերմեր, կեր) և նյութեր (ախտահանման միջոցներ, պարաններ և այլն), նաև հողամաս, վորը պետք է մշակի բրիգադը:

Ընդհանրապես բրիգադային հողամասերն անհրաժեշտ է ընտրել մի տեղում և վոչ յերկարնեղ շերտով, այլ ըստ հնարավորության քառակուսի: Դա հատկապես կարեվոր է, ապահովելու աշխատանքների լավագույն ղեկավարությունը, նրանց հաշվառումը և բրիգադների արտադրական-կենցաղային և կուլտուրուսավորական սպասարկումը դաշտում:

Նպատակ ունենալով մեծապես ողտագործել հողամասերի վանդախային սիւստեմի տուալելությունները, հարկավոր է բրիգադային հողամասերը բաժանել լրիվ 100 հեկտարներով, թույլ չտալով միջկվուսյն վանդակի մանրացումը:

Տարվա ընթացքում բրիգադների աշխատանքի ավելի հավասարաչափ լարվածությունն ապահովելու համար շատ կարեվոր է, վոր վոչ միահավասար աշխատանք պահանջող բույսերի խմբերը (հասկային, շարքահերկ) տեղավորվեն բրիգադային հողամասերում համապատասխան հարբերություններ:

Կոլտնտեսութեան կազմակերպված տերրիտորիայում, վորտեղ բույսերը ճիշտ տեղավորվել են ցանքաշրջանի համաձայն, բրիգադային հողամասի ընտրութեանը մեծ դժվարութեան չի ներկայացնում: Այդ դեպքում գյուղատնտեսական բույսերի միատարր խմբերը (հասկային, շարքահերկ-տեխնիկական, խոտեր) միասին են լինում և տեղավորվում են ցանքաշրջանի վորոշ դաշտերում: Բույսերի այդպիսի տեղավորումն ստեղծում է ավելի բարենպաստ պայմաններ աշխատանքի կազմակերպութեան համար, նպաստելով բրիգադային հողամասերի ճիշտ ընտրութեանը: Վերջիններս այդ դեպքում պետք է տեղավորել ցանքաշրջանի յերկու-յերեք դաշտում, բույսերի խմբերի համապատասխան հարաբերութեամբ և կոլտնտեսութեանում ցանվող բույսերի նվազագույն հավաքով:

Իսկ կոլտնտեսութեան տերրիտորիայի անկազմակերպութեան դեպքում, յերբ բույսերի միատեսակ խմբերը տեղավորված են տարածութեան զսնազան տեղերում, վորչ ցանքաշրջանի համապատասխան, բրիգադային հողամասն ավելի դժվար է ճիշտ ընտրել: Այդ դեպքում բրիգադային հողամասերը կարող են կազմվել բույսերի խմբերի այն տարածութեաններէ, վորոնք տեղավորված են կից կամ շերտերնք մեջ:

Բրիգադային հողամասերը, վորոնք ամրանում են բրիգադներին ամբողջ տարին, կոլտնտեսութեաններն ընտրում են տարվա սկզբին, գարնանացանի կամպանիայից առաջ: Մի շարք կոլտնտեսութեաններում այդ աշխատանքը սխալ է տարված: Մի քանի կոլտնտեսութեաններ ընտրել են բրիգադային հողամասերը, ներառնելով նրանց մեջ կոլտնտեսութեաններում ցանվող բոլոր բույսերը: Իրա հետեւանքով բրիգադային հողամասը կազմվել է մի քանի մանր մասերից, վորոնք տեղավորված են շերտերնք մեջ համարյա կոլտնտեսութեան ամբողջ տարածութեան վրա և բրիգադային հողամասերն ընտրելիս, հարյուրհնգտարային վանդակները մանրացել են:

Հարյուրհնգտարային վանդակների մանրացման և բրիգադային հողամասը մի քանի (մինչև 9 մասերում) տեղավորելու որինակ ծառայում է Հյուսիս-Ոսեթիայի ինքնավար մարզի «Միկոյան» կոլխոզը:

Այդ ձևով ընտրված հողամասերը չեն կարող նպաստել աշխատանքի ճիշտ կազմակերպմանը, դժվարացնում են աշխատանքների արտադրութեանը, ղեկավարութեանը և նրանց հաշվառքը դաշտում, ստեղծում են բրիգադներին հաճախակի տեղափոխում մի տեղից մյուս տեղը և մեծ տարածութեաններ

և հետեւաբար իջեցնում են աշխատանքի արտադրողականութեանը:

Բրիգադներին հողամասերի ընտրութեան գործում կոլտնտեսութեանների թույլ տված սխալները քաղհանային աշխատանքների ընթացքում պետք է վերանայն բրիգադային հողամասերի և բրիգադների վերակազմութեան միջոցով, հանուն աշխատանքի ճիշտ կազմակերպութեան:

Յուրաքանչյուր կոլտնտեսութեանում հողի դիմադրկութեան վոչնչացման զուգընթաց, յուրաքանչյուր արտադրական բրիգադում պետք է վոչնչացվի և լծկանի ու գործիքների դիմադրկութեանը: Բրիգադում գտնվող ամբողջ աշխատավորանասուններն ու գործիքները պետք է ամրանան վորոշ կոլտնտեսականների: Հ. Կովկասի Յերկրկոլտնտնութեանն իր 19 հունվարի 32 թվի վորոշումով պարտավորեցրեց կոլտնտեսութեաններին, «ամրացնել կոլտնտեսականներին ձիերին, ամբողջ աշխատանքային տարում յուրաքանչյուր կոլտնտեսականին յերկու ձի հաշվելով: Յուրաքանչյուր մի գույգ ձիու ամրանում են գյուղատնտեսական վորոշ գործիքներ և ձիասարք»: Ամրացած կոլտնտեսականը կատարում է ձիերի ամբողջ սպասարկումը, բանեցնում է նրանց և պատասխանատու յե ձիերի և նրանց ամրացած գործիքների դրութեանը, աշխատունակութեանը և պահապանմանը:

Կոլտնտեսութեանները քաղհանային կամպանիա պիտի մտնեն, լրիվ կերպով վերացնելով հողի, լծկան անասունների, կուլտիվատորի և մյուս իրերի դիմադրկութեանը: Դիմադրկութեան դեմ մղվող պայքարը քայքայելու բոլոր փորձերը պետք է ստանան վճռական հակահարված:

Արտադրութեան մեջ վնասակար դիմադրկութեանն անհրաժեշտ է վերջնականապես և լրիվ վոչնչացնել նաև տրակտորային բրիգադում, վոր աշխատում է կոլտնտեսութեան դաշտերում: Յուրաքանչյուր մեքենա-տրակտորային բրիգադին ամբողջ տարում ամրացվում է վորոշ արտադրական հողամաս, վոր տեղավորված է մեկ կամ մի քանի կոլտնտեսային բրիգադային կից հողամասերում:

Յուրաքանչյուր տրակտորային բրիգադին ամրանում են ամբողջ տարին անհրաժեշտ թվով տրակտորներ, կցորդ և գյուղատնտեսական գործիքներ:

Յուրաքանչյուր տրակտորային ամբողջութեան պետք է ամրանան յերկու տրակտորիստ-ղեկավարներ և անհրաժեշտ

քանակութեամբ կոլտնտեսականներ, աշխատելու կցորդ մեքենաների վրա:

Այդ բոլոր միջոցառումները կպահպանեն ամբողջ լծկանն ու գործիքները, կնպաստեն հողերի լավ ոգտագործմանը և աշխատանքի արտադրողականութեան զգալի բարձրացմանը: Կոլտնտեսութեաններն ու ՄՏԿ անդամք վոչնչացնելով դիմադրկութեան իրենց արտադրութեան մեջ, դրանով կատարած կլինեն շատ կարեւոր և կոլտնտեսային արտադրութեանը վերաբերվող ընկ. Ստալինի հետեւյալ ցուցումը.—

«Ձի կարելի ալլես հանդուրժել դիմադրկութեանն արտադրութեան մեջ: Այդ չարիքից աղատվելու համար պետք է նոր ձեւով կազմակերպել աշխատանքը, պետք է դասավորել ուժերն աշխատանքի, վոր բանվորների յուրաքանչյուր խումբ պատասխանատու լինի աշխատանքի, մեխանիզմների, դադգյանների, աշխատանքի վորակի համար»:

Այն կոլտնտեսականները, վորոնց ամրացված է կոլտնտեսային գույքն աշխատանքների ժամանակ (լծկանը, գործիքները), նրանց համար նյութապես պատասխանատու չեն: Առանց այդ պատասխանատվութեան դիմադրկութեան վոչնչացումն իր նպատակին չի հասնի:

«Այն բրիգադը, վորի համար կոլտնտեսութեան վարչութեանը վորոշել է արտադրական առաջադրութեանը, արտադրական միջոցառումները, տնտեսութեան հողամասը կամ ճյուղը—առաջադրութեան համաձայն անմիջապես ամրացնում է կոլտնտեսականներին—լծկանին, փոխադրութեան միջոցներին, մեքենաներին և այլն—մի տարի ժամանակով, պարտադրելով նրանց վրա նյութական պատասխանատվութեան» (Յերկրային Հողվարչութեան և Յերկրկոլտնտնութեան 1932 թվի հունվարի 19-ի վորոշումից):

Հենց այդ վորոշումով կոլտնտեսութեանները պարտավոր են հաստատել խրախուսական միջոցառումների կարգը բերքի բարձրացման, անասնապահական արտադրանքի յեւքի, արտադրական ծախսերի պակասեցման և այլ գործերում:

Մրախուսական միջոցառումների հաստատումը կոլտնտեսութեաններին համար պարտադիր է: Այդ միջոցառումները նյութապես լավ շահագութում են կոլտնտեսականներին, ավելի լավ կատարելու բոլոր աշխատանքները, վորոնց թվում նաև քաղհանը—պլանից ալիլի կարճ ժամկետներում:

Կոլտնտեսութեան մեջ յուրաքանչյուր բրիգադ արտադրական աշխատանքը կազմակերպում է և կատարում տարվա սկզբին վարչութեանից ստացած տարեկան արտադրական առաջադրութեան հիման վրա: Արտադրական առաջադրութեան մեջ բրիգադին ցույց է տրվում առաջադրութեան ծավալը, բրիգադի ոգտագործելիք ագրոմիջոցառումների և վորակական ցուցիչների թվարկումը, բրիգադի ստանալիք արտադրանքի չափը և աշխուրի այն քանակը, վորը կարող է գործադրել բրիգադն արտադրական առաջադրութեան կատարման համար: Բացի դրանից, այդ առաջադրութեան մեջ նշանակվում է, քանի կոլտնտեսական, լծկան, գյուղատնտեսական գործիքներ և ինչպիսի կեր, դանադան նյութեր են ընտրվում և ամրացվում բրիգադին ամբողջ տարին: Բացի այդ, տարեկան արտադրական առաջադրութեան մեջ ցույց են տրվում բրիգադի պարտավորութեաններն առաջադրութեան կատարման վերաբերյալ—անցկացնել աշխատանքները գործավարձի հիման վրա, կիրառելով աշխատանքի կազմակերպութեան սոցիալատական ձեւերը, վոչնչացնել լծկանի և գործիքների դիմադրկութեանը, կատարել աշխատանքը ժամանակին, պահելով վորակական բոլոր ցուցիչները, կոլտնտեսականներին իրադեկանել աշխատանքի չափի և դնահատման մասին, աշխատանքի առաջադրութեանը հասցնել յուրաքանչյուր կոլտնտեսականի, ժամանակին և ճիշտ անցկացնել աշխատանքի հաշվառքը և այլն:

Տարեկան արտադրական առաջադրութեան հիման վրա բրիգադի բրիգադային ակտիվի հետ միասին կազմում է հաստատված ձեւով յուրաքանչյուր արտադրական սեզոնի համար ագրոպլան—կարգագիր: Վերջինս նախապես մշակվում է կոլտնտեսային լայն մասսաների կողմից: Ագրոպլան—կարգագիրը կազմվում է նաև քաղհանային աշխատանքների ամբողջ ընթացքում:

Ագրոպլան—կարգագիրը ներկայացնում է իրենից քանակական և վորակական միջոցառումների կոնկրետ գործողութեան պլան, վորը պետք է կատարել բրիգադն այս կամ այն արտադրական ժամանակամիջոցում, մասնավորապես քաղհանային աշխատանքների միջոցին: Բրիգադի ագրոպլան—կարգագրում ցույց են տրվում քաղհանի շրջանում կատարվող բոլոր տեսակի աշխատանքները, հատկապես աշխատանքի տեղերը (մոխխոտով ծածկված լինելը, հողաշերտը, մակերեսը և այլն),

բերեալը պարտավոր ե ղեկավարվել նախորդ կոտնտեսութ-
 թյունում հաստատված քաղհանային աշխատանքների վորա-
 կական ցուցիչների կոնկրետ ստանդարտներով: Որինակ,
 արեւածաղկի առաջին վարի համար կարող են լինել հետեւի-
 յալ վորակական ցուցիչները—ա) կուլտիվատորի պատրաս-
 տումը և սարքադրումը բանելու համար, սրելով կտրող մա-
 սերը, բ) կուլտիվատորի ձիշտ և համաչափ աշխատանքը, ա-
 ռանց կտրելու բույսերը շարքերում և թաղելու հողում, գ)
 մոլախոտերի լրիվ վոնչացումը և շարքամիջերի փոխան-
 ցումը: Յերկրկոտնտեսության մշակած վորակական ցուցիչ-
 ների որինակելի ստանդարտները տրվում են առաջին
 հավելվածում: Կոտնտեսություններն իրենց համար վորա-
 կական ցուցիչների ստանդարտներ հաստատելիս, պետք ե
 առաջնորդվեն նրանցով, հաշվառելով տեղական առանձնա-
 հատկությունները: Այս կամ այն աշխատանքի վորակի ցու-
 ցիչները նշանակվում են ագրոպլան-կարգադրի «աշխատանքի
 կատարվելիք վորակական ցուցիչների» սյունյակում:

«Աշխատանքի ընդհանուր ծավալը» սյունյակում նշա-
 նակվում ե, որինակի համար, յեգիպտացորենի այն տարածու-
 թյունը բերեալային հողամասում, վորը պետք ե վարել քաղ-
 հանի ժամանակամիջոցում:

Ագրոպլան կարգադրի մշակելիս բերեալը մեծ ուշադ-
 րություն պետք ե դարձնի քաղհանային աշխատանքների
 կատարման ժամկետի վրա, վորովհետեւ քաղհանը ժամանա-
 կին կատարելը նրա վորակի հետ միասին վճռական նշանա-
 կություն ունի շարքահերկ և տեխնիկական բույսերի բերքի
 բարձրացման գործում: Աշխատանքի կատարման ժամկետը
 մտցվում ե ագրոպլան-կարգադրի համապատասխան սյունյակը:
 Դիտենալով աշխատանքի ընդհանուր ծավալը և նրա կատար-
 ման ժամկետը, դժվար չի վորոշել աշխատանքի ամենորոյա
 ծավալը (բաժանելով աշխատանքի ընդհանուր ծավալն այդ
 աշխատանքի կատարման որերի քանակի վրա):

Ագրոպլան-կարգադրի մնացած սյունյակները լցնելու
 համար բացի այդ անհրաժեշտ ե բրիգադում առաջնորդվել
 նախորդ մշակված և կազմված աշխատաչափերով-քաղհա-
 նային աշխատանքներով՝ աշխատանքի յուրաքանչյուր տեսա-
 կի գնահատման վերաբերյալ: Աշխատաչափերի և աշխատանքի
 ամենորոյա ծավալի համեմատ ագրոպլան-կարգադրում վորոշ-
 վում և ցույց ե տրվում գործիքների, լծկանի և կոտնտեսա-
 կանների (տղամարդ, կին, պատանի) այն քանակը, վորը պետք

ե դուրս բերի բերեալը, քաղհանային աշխատանքները ժա-
 մանակին և ձիշտ կատարելու համար:

Քաղհանային աշխատանքների ժամանակ տրակտորա-
 յին քաշող ուժ գործադրելու դեպքում, բերեալը ագրոպլան-
 կարգադրի կազմելիս պետք ե հաշվի առնի կոտնտեսությու-
 նում տրակտորային բերեալի մասնակցության ծավալը քաղ-
 հանային աշխատանքներում, կոտնտեսականների և կենդանի
 լծկանի գործադրած աշխատանքի ծավալը տրակտորներին
 սպասարկելու վերաբերյալ և այդ աշխատանքները կատարե-
 լու ժամկետերը: Դրա համար ագրոպլան-կարգադրերը կոտն-
 տեսային բերեալի քաղհանային աշխատանքները կատարելու
 վերաբերյալ, պետք ե լրիվ չափով կապվի տրակտորային բրի-
 գադի բանվորական պլանի հետ հենց այդ սեզոնին:

Ագրոպլան-կարգադրի այդպիսի կազմվածքն աչքի կըն-
 կնի իր կոնկրետությամբ և բրիգադի համար կծառայի վոր-
 պես գործողության պլան արտադրական ժամանակամիջոցում:

Ագրոպլան-կարգադրի կլինի իսկական բանվորական
 պլան, լավ կանդադարձնի բերեալի բոլոր արտադրական հը-
 նարավորությունները, յեթե նա ամենամանրակրկիտ կերպով
 մշակվի բերեալի կոտնտեսականների միջիկ:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՔԱՂՀԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՈՐԾԱ-
 ՎԱՐՁԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Ձիշտ կազմակերպել արտադրությունը, ձիշտ կազմակեր-
 պել աշխատանքը արտադրության մեջ, հնարավոր ե միայն,
 յերբ աշխատանքները տարվում են գործավարձի հիման վրա:
 Առանց գործավարձի չի կարելի ձիշտ կազմակերպել տնտե-
 սությունը: Գործավարձը հանդիսանում ե հզոր միջոց աշխա-
 տանքի արտադրողականությունը բարձրացնելու և նյութա-
 պես շահագրգռելու կոտնտեսականներին, կատարելու աշխա-
 տանքն ավելի լավ և արագ, վորովհետեւ կոտնտեսության
 յեկամուտը բաշխվում ե կոտնտեսականներին, նրանց կատա-
 րած աշխատանքի քանակի և վորակի համեմատ:

«Յեթե նայենք, թե ինչ ե ներկայացնում իրենից գոր-
 ծավարձը, պետք ե ուղակի ասել, վոր այդ գործավարձի եյու-
 թյունը հետեւյալն ե—յեթե դու, որինակի համար, վարել ես
 այսքան հեկտար, դա քեզ համար հաշվվում ե մի աշխոր. յե-
 թե դու վարել ես մեկ ու կես անգամ ավելի, քեզ համար մեկ
 ու կես անգամ ավելի աշխոր կհաշվվի: Յեթե դու սայլապան

ևս և որակաւն կրել ևս 15 սայլ բեռ, իսկ մյուս սայլապաւնը կրել ե 3 սայլ, չնայած յերկուսն ել աշխատել են մի որ և յերկուսն ել կարող են ասել—գրիւր ինձ մի աշխոր, յես մի որ աշխատել եմ: Բայց վորովհետեւ մեկն աշխատել ե, իսկ մյուսը պարապ տեղն ե քշել, դրա համար ել 15 սայլ կրողին պետք ե նշանակել 5 անգամ ավելի, քան յերեք սայլ կրողին: Ահա ամբողջ եյությունը» (ընկեր Յակովլեւի գեկուցումից—կոլտնտեսային շինարարութեան մասին):

Աշխատանքների կազմակերպումը գործավարձի սկզբունքով—խփում ե կորդիչին, ծուլին, կուլակի ուղղակի ոգնականներին կոլտնտեսութեաններում, վորոնք ցանկանում են ավելի շատ կորդել կոլտնտեսութեան յեկամուտներից, համարյա չաշխատելով:

Կոլտնտեսային աշխատանքի փորձի բազմաթիւ տվյալները հաստատում են գործավարձի ահագին առավելութեանները հանդեպ որավարձի: Որինակ, Արմավիրի ռայոնի «Լենին» կոլտնտեսութեան որավարձի դեպքում շարքահերկ բույսերի մի հեկտարի ձեռքի քաղհանը կատարել ե 18 կոլտնտեսականներով, իսկ գործավարձի մուծման դեպքում—8 կոլտնտեսականով: Գործավարձի ոգուտն այնքան ակներեւ ե վոր ՀԿ(բ) Կենտկոմի 1931 թվի հունիսյան պլենումը ե խորհուրդների 6-րդ համագումարն առաջարկեցին բոլոր կոլտնտեսութեաններում կազմակերպել աշխատանքը գործավարձի հիման վրա, կատարելով աշխատանքի գնահատումն աշխորերով:

Հ. Կովկասի կոլտնտեսութեանները պետք ե անցնելին գործավարձին վոչ ուշ, քան 1931 թվի ապրիլի 10 (համաձայն Հոգեօրհմատի ե Կոլտնտեսությունի 1931 թվի մարտի 24-ի վորոշման): Բայց ե այնպես դեռ մինչեւ հիմա կարելի յե հանդիպել առանձին կոլտնտեսութեաններին, վորոնք աշխատանքը կատարում են որավարձով, վոչ թե գործավարձով: Ընդհանրապես այդպիսի կոլտնտեսութեաններում ուժեղ ե կուլակների ազդեցութեանը ե ծուլերի ու կորդիչների ճնշումը, իսկ յեկամուտները ցածր են: Մի շարք կոլտնտեսութեանները անց են կացնում գործավարձը ձեւականորեն, իսկ գոյութեան ունեցող աշխատանքի կազմակերպութեանը հազիւ ե տարբերվում որավարձից:

Գաղհանի շրջանում վոչ մի կոլտնտեսութեան չպետք ե լինի աշխատանքի որավարձային կազմակերպումով:

Գործավարձային աշխատանքների կազմակերպութեան անհրաժեշտ պայման հանդիսանում ե աշխատաչափի վորոշու-

մը կոլտնտեսութեանում ե աշխատանքի գնահատումն աշխորերով: Առանց աշխատաչափի չի կարող գործավարձ լինել: «Վորտեղ չկա աշխատաչափ, այնտեղ չկա կազմակերպւած տնտեսութեան» (Յակովլեւ):

Ագրոպան—կարգադիրը կազմելու ժամանակ քաղհանի միջոցին կոլտնտեսութեանում ե բրիգադում պետք ե կազմված ե ստուգված լինեն քաղհանային բոլոր աշխատանքների աշխատաչափերը: Աշխատաչափերը վորոշվում են գործադրվող լծկանի տեսակի, աշխատանքների մեքենացման աստիճանի, հողաշերտային ե ուրիշ պայմանների համաձայն: Աշխատաչափը վորոշելիս պետք ե նկատի ունենալ լավագույն բրիգադներին ե կոլտնտեսականների խմբակներին:

Մինչդեռ մի շարք կոլտնտեսութեաններ գործնականում կիրառում են սխալ նորմաներ—ցածր կամ բարձր: Փոքրացրած աշխատաչափերը թերի յեն ոգտագործում կոլտնտեսականների աշխատանքը ե արհեստականորին արգելում են արտադնացութեանը: Մեծացրած աշխատաչափերը չեն խթանում աշխատանքի արտադրողականութեան բարձրացմանը ե դցում են աշխատանքային դիսցիպլինան, վորովհետեւ կոլտնտեսականը համոզված ե, վոր մեծացրած նորման չի կարող կատարել ե գերակատարել:

Աշխատաչափը վորոշելիս կոլտնտեսութեանների այդպիսի սխալները պետք ե ուշադրութեան առնվեն, վերջնականապես վերացնելու համար: Աշխատաչափի ճշտումը բրիգադի համար պետք ե կատարել մինչեւ յուրաքանչյուր 100 հեկտարային վանդակը, հաշվի առնելով նրա առանձնահատկութեանները: Աշխատաչափերի մշակումը պետք ե կատարել արտադրական ե բրիգադային ժողովներում—կոլտնտեսականների լայն մասնակցութեամբ: Բրիգադի ճշտած աշխատաչափերը հաստատվում են կոլտնտեսութեան վարչութեան կողմից:

Որինակելի աշխատաչափերը քաղհանային աշխատանքների վերաբերյալ, աշխատանքի մի վորի գնահատման հետ միասին տալիս ենք յերկրորդ հավելվածում:

Կոլտնտեսականների կատարած աշխատանքը գնահատվում ե պայմանական միավորներով—աշխորերով, վորոնք արտահայտելով աշխատանքի քանակն ու վորակը, հիմք են ծառայում յեկամուտների բաշխմանը, ինչքան շատ ունենա կոլտնտեսականն աշխորեր, այնքան շատ կատանա յեկամուտները բաշխելիս:

Աշխատանքների գործավարձ յին գնահատման համար անհրաժեշտ է նախորոգ վորոշել բոլոր աշխատանքների միավորի գնահատումը: Դրա համար բոլոր աշխատանքները, վորոնք տարբեր են գնահատվում՝ համաձայն կատարման դժվարության և պահանջվելիք վորակավորման, պետք է բաժանվեն խմբերի:

Յերկրտնտնությունում լուծված առաջարկել և կոլտնտեսություններին, վորոշել աշխատանքի հինգ խմբեր, որական աշխատաչափի հետևյալ գնահատումով—

1 խումբ—թեթև աշխատանքներ—գնահատելով որական աշխատաչափը կեսաշխոյ (հիսուն հարյուրերորդական, 0,50),

2 խումբ—միջակ աշխատանքներ—75 հարյուրերորդական աշխոյ (0,75),

3 խումբ—ծանր աշխատանքներ—մի աշխոյ.

4 խումբ—փորձառություն պահանջող ծանր աշխատանքներ—մեկ ամբողջ 25 հարյուրերորդական աշխոյ (1,25),

5 խումբ—վորակալ աշխատանքներ—1 աշխոյ և աշխորի 50 հարյուրերորդական (1,5):

Աշխատանքները ճիշտ գնահատելու տեսակետից շատ կարևոր է, վոր քաղհանային աշխատանքները ճիշտ հատկացվեն այս կամ այն խմբերին: Այնպիսի աշխատանքներ, ինչպես քոզի աշխատանքը վարի ժամանակ, հանձնարարվում է հատկացնել միջակ աշխատանքներին, իսկ մնացած քաղհանային աշխատանքները (մաքրում, քաղհան, փխրում և այլն) ծանր աշխատանքների խմբին: Տրակտորով վարելիս կոլտնտեսականների աշխատանքը հատկացվում է փորձառություն պահանջող ծանր աշխատանքների խմբին:

Այդպիսով աշխատանքի ճիշտ հատկացումն այս կամ այն խմբակին, աշխատանքի ճիշտ վորոշումը, կատարած աշխատանքի քանակը և վորակի ճիշտ և ժամանակին հաշվառումն ապահովելու հետ միասին, հանդիսանում են գործավարձային աշխատանքների ճիշտ կազմակերպման պայմաններ: Դրան հնարավոր է հասնել, վճռական պայքար մղելով կոլտնտեսության մնացորդների և նրա գործակալների (ծուլերի, կորգիչների) դեմ և ներգրավելով դեպի այդ աշխատանքը կոլտնտեսային լայն մասսաներին:

ԾԱՎԱԼԵԼ ՍՈՑՄՐՅՈՒՄԸ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղհանային աշխատանքներն ամենահաջող կերպով կատարվեն և կտան ամենաբարձր արդյունքն այն դեպքում, յերբ նրանք կատարվեն կոլտնտեսականների արտադրական

նախաձեռնությամբ և իսկական աշխատանքային վոզեվորություններ, յերբ կոլտնտեսություններն ընդգրկվեն սոցմրցմամբ և կատարեն աշխատանքը հարվածայնությամբ:

Մրցման մեջ ամենանշանակալին այն է, վոր նա առաջացնում է արմատական հեղաշրջում դեպի աշխատանքն ունեցած հայացքներում, վորովհետև նա վերածում է աշխատանքն ամոթալի և ծանր լծից, ինչպիսին նա համարվում էր առաջ, պատվի, փառքի, առաքինությունից և հերոսությունից գործ (ընկեր Ստալինի զեկուցումից XVI կուհամագումարին):

Սոցմրցման և հարվածայնության հիմնական խնդիրն այն է, վոր արտադրության և աշխատանքի ճիշտ կազմակերպումով, կոլտնտեսականների վոզեվորությանն ու ակտիվությանը ճիշտ ուղղություն տալով և պահպանելով աշխատանքային դիսցիպլինան, բարձրացվի և ամրապնդվի կոլտնտեսության հզորությունը:

Սոցմրցումը պետք է ընդգրկի բոլոր բրիգադներին, բոլոր աշխատանքային խմբերին և բոլոր կոլտնտեսականներին: Առանձին կոլտնտեսականների միջև սոցմրցումը դարգացնելու հղոր լծակ հանդիսանում է գործավարձը:

Սոցմրցման հիման վրա պետք է առաջանան կոլտնտեսականների հարվածային խմբեր, կոլտնտեսության հարվածային բրիգադներ:

Կոլտնտեսությունների աշխատանքի վորձը ցույց տվեց, վոր վորտեղ ճիշտ է ծավալված սոցմրցումը, աշխատանքի արտադրողականությունն ամենամեծ նվաճումներն է արել: Յերկրամասում կան կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների իսկական աշխատանքային վոզեվորություն ահագին որինակներ:

Քաղհանային աշխատանքների միջոցին կոլտնտեսականները մրցելով միմիանց հետ, պետք է սոցպայմանագրում մտցնեն արտադրության այնպիսի պարտավորություններ, վորոնք նպաստելու յին աշխատանքների հաջող և ճիշտ կատարմանը: Սոցմրցման հիմնական առարկաները շարքահերկ—տեխնիկական բույսերի խնամքի վերաբերյալ կարող են լինել—աշխատանքի գերակատարումը, աշխատանքի ժամկետների սեղմումը, վրաձեղական ցուցիչների լավ կատարումը, պարապուրդների բացակայություն և այլն:

Կոլտնտեսային կյանքում շատ դեպքեր կան, յերբ կապած սոցպայմանագրերը կոլտնտեսականները կատարել են անխնամ: Սոցմրցման հարցերի շուրջը չի հրավիրվել կոլ-

տնտեսային մասսաների ուշադրութիւնը: Աշխատանքի այդ թերութիւնները կ'ոլտնտեսականները պետք է վերացնեն: Դրա համար անհրաժեշտ է անպայման կարգավորել պայմանագրերի կատարման ստուգումը, ներգրավելով այդ աշխատանքին բոլոր կ'ոլտնտեսականներին:

Սոցմրցման և հարվածայնութեան արդյունքները պետք է քննարկել լայն արտադրական խորհրդակցութիւններում: Հետեւանքներն այդպէս քննարկելով, կ'զրսելորվեն սոցմրցման և հարվածայնութեան լավագոյն նվաճումները և նրանց մասին կ'իմանա կ'ոլտնտեսային ամբողջ մասսան:

Ամբողջ բրիգադները, խմբերն և անհատ կ'ոլտնտեսականները, վորոնք ցույց են տվել աշխատանքի լավագոյն որինակներ, պետք է ըստ ամենայնի խրախուսվեն: Պարգեւատրումը պետք է հանդիսանա խրախուսման գլխավոր ձեւերից մեկը: Դրա համար կ'ոլտնտեսութիւնում կ'ազմվում է յեկամուտների մեկ ու կես սովորից առանձին պարգեւատրման ֆոնդ: Լավագոյն կ'ոլտնտեսականները, վորոնք հայտնաբերվում են սոցմրցման մեջ, ստանում են հարվածային կոչումը:

Այդպիսով քաղհանային աշխատանքները, վորոնք կատարվում են գործավարձի սկզբունքով, ներգրավելով կ'ոլտնտեսային լայն մասսաներին սոցմրցման և հարվածայնութեան մեջ, պետք է ապահովեն աշխատանքի բարձր արտադրողականութիւնը:

ՃԻՇՏ ԴԱՍԱՎՈՐԵԼ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ԱԳՐՈՊԼԱՆ—ԿԱՐԳԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Քաղհանային աշխատանքների հաջող ընթացքի համար գործավարձի կիրառումով, գործադրելով աշխատանքի կ'ազմակերպման սոցիալիստական ձեւերը, անհրաժեշտ է բրիգադում ձիշտ կատարել կ'ոլտնտեսութեան վարչութեան հաստատած ագրոպլան—կարգադիրը, ձիշտ դասավորել կ'ոլտնտեսականներին արտադրութեան մեջ:

Դրա համար բրիգադիւրը կ'ազմակերպում է իր բրիգադում աշխատանքի (բանվորական) խմբեր: Խմբերն ստեղծվում են առանձին աշխատանքներ կատարելու համար (ձիւււտը, տրակտորավար, մաքրում, հասկարույսերի քաղհան և այլն) կամ մի քանի տեսակ աշխատանքներ, յեթե նրանք կատարվում են միաժամանակ միեւնում հողամասում (ձեռաքաղհան փորումով, ձեռաքաղհան ստուգումով և այլն):

Բրիգադիւրը խմբերի գլխավոր է նշանակում ավագ խմբավարներին: Վերջիններս ֆիզիկական աշխատանքից չեն ազատվում և աշխատում են խմբի մյուս կ'ոլտնտեսականներին հավասար:

Կ'ոլտնտեսականների բաժանումն ըստ խմբերի կատարում է բրիգադիւրը խմբավարների մասնակցութեամբ: Կ'ոլտնտեսականներին այս կամ այն խումբը մտցնելիս նկատի են առնվում կ'ոլտնտեսականների ունակութիւնները և տվյալ աշխատանքը կատարելու փորձը, նաև այս կամ այն խմբում աշխատելու ցանկութիւնը, յեթե դա չի խանգարի բրիգադի նորմալ աշխատանքը:

Նկատի ունենալով, վոր քաղհանային աշխատանքների միջոցին կանանց աշխատանքի տեսակարար կշիւր համեմատաբար մեծ է, աշխատանքի խմբերը ձեւակերպելիս նպատակահարմար է ստեղծել հատուկ կանացի խմբեր: Աշխատանքի փորձը ցույց է տալիս, վոր այդպիսի խմբերի արտադրողականութիւնն առանձնապէս բարձր է:

Քաղհանային աշխատանքները կատարելու համար հարկավոր է կ'ազմակերպել խմբեր կ'ոլտնտեսականների քիչ քանակով, վորպեսզի ապահովվի աշխատանքի լավագոյն հաշվառքը և աշխատանքի վորակի հսկողութիւնը: Այդ աշխատանքը կարող է կատարել բրիգադիւրի հանձնարարութեամբ նաև խմբավարը: Կ'ոլտնտեսային աշխատանքի փորձով հաստատված է, վոր խմբերը չպետք է կ'ազմել 10 կ'ոլտնտեսականից ավելի:

Քաղհանային աշխատանքները ժամանակին և ձիշտ կատարելու գործում հսկայական նշանակութիւն ունի նրանց մեքենայացումը: Մինչդեռ տրակտորավարը մինչև այժմ թույլ է գործադրվել: Ներկա տարում շարքամիջերի վարը տրակտորաուժով, վորոշված է անցկացնել բավական մեծ չափով:

Մեքենական քաղհանավարը կարելի է կատարել տրակտորներով առանց հարմարումների, վորոնք թույլ են տալիս անիմների աշխատի հեռավորութիւն, վոր տրակտորն ացնելով շարքամիջով չփչացնի բույսերն իր անիմներով: Հյուսիսային կովկասում աշխատող համարյա բոլոր տրակտորներն այդպիսի հարմարումներ չունեն: Անիմների հեռավորութիւնը փոխելու հարմարութիւն չունեցող տրակտորները ներկա տարում գործադրվելու յեն քաղհանային աշխատանքներին սահմանափակ թվով (Ստալինգրադի տրակտորագործարանի տրակտորները):

Մեքենական քաղհանավարը մեղ մոտ յեղած տրակտորներով (Ֆորձոն, փոքր «ինտերնացիոնալ», մեծ «ինտերնացիոնալ» Ալիս-Չալմերս, Ջոն-Դիր և Յունայտեղ) կատարելիս, վորոնք չունեն այդ հարմարումները, պետք է շարքաներկ-տեխնիկական բույսերը ցանելիս նախատեսել տվյալ տիպի տրակտորների անցումը կամ թե չե տրակտորների ընտրություն անել վորոշված շարքամիջոցների համեմատ (այդ-մասին մանրամասն ասված է «Քաղհանային աշխատանքների տեխնիկայի» բաժնում)։

Տրակտորային մշակման դեպքում շատ կարևոր է, վոր շարքաներկ բույսերը ցանվեն միանգամայն ճիշտ շարքամիջերով։ Հակառակ դեպքում շարքերը կարող են փնավել տրակտորի անիվներին։

Շարքաներկ բույսերի շարքամիջային մշակումը լրիվ մեքենայացնելու համար մեծ նշանակություն ունի փնջային (гнездовой) շախմատաձև ցանքը։ Փնջային շարքացան չի-նելու դեպքում ցանքի այդպիսի ձևը կարելի չե կատարել ձեռքով։ Այդ նպատակով պետք է նախապես ակոսել դաշտը մարկերով (ակոսիչներով) և ակոսների հատման տեղում ձեռք-տնկել շարքաներկ բույսերի սերմերը։

Ցանքի այդ ձևով պահանջում է հատուկ ուշ-դիր վերաբերմունք։ Նկատել անելով, վոր փնջային շախմատաձև ցանքն յերկրամասում չի գործադրվում, բացի ամենաչնչին բացառություններից, կարելի չե հանձնարարել առաջին անգամ յեզիպտացորենի և զենագերչակի փնջաձև ցանքը, վորոնք պահանջում են սնունդի մեծ տարածություններ։

Տրակտորին կցված միատեսակ կուլտիվատորների վրա աշխատող կոլտնտեսականները կազմում են մի խումբ։ Այդպիսի խմբում կոլտնտեսականների քանակը համապատասխանում է տրակտորով աշխատող կուլտիվատորների քանակին։ Անհրաժեշտ է յուրաքանչյուր տրակտորի շուրջը կազմակերպել յերկու այդպիսի խմբեր, վորոնք աշխատում են հերթով։

Ձիաքաղհանավարի դեպքում խմբերը կազմվում են 1—3 կուլտիվատորների շուրջը։ Քաղհանը փխրումով կամ ստուգումով շարքերում կատարելու համար կամ ճակնդեղը ձեռքով մաքրելու (նոսրացնելու-щаровка) կամ թե պոկելու համար ամեն դեպքում կազմվում են ինքնուրույն խմբեր։

Բրիգադի բանվորական խմբերը պետք է ձևակերպվեն վոչ ուշ, քան քաղհանային աշխատանքներից 5—6 որ առաջ։ Վորոշելով խմբերի քանակը բրիգադում և լրացնելով նրանք

կոլտնտեսականներով—ազրոպլան-կարգադրի կատարման համար՝ բրիգադերը պարտավոր է հասցնել աշխատանքային առաջագրությունը մինչև յուրաքանչյուր խումբ, յուրաքանչյուր կոլտնտեսական։

Խմբերին և առանձին կոլտնտեսականներին բրիգադիլը տալիս է առաջադրությունները բանավոր կերպով, ըստ վորում ցույց է տրվում աշխատանքի կատարման ժամկետը - վորոշ բույսի տարածություն վրա (աշխատանքը հաշվառելիս կոլտնտեսականներին տրվող առաջադրությունը նշանակվում է)։

Բացատրենք որինակով։ Յենթադրենք քաղհանային աշխատանքների ժամանակ ազրոպլան-կարգադրում մտցված է 76 հեկտար արեվածադկի շարքերի առաջին քաղհանը փխրումով և 120 հեկտար յեզիպտացորենի քաղհանը ձիաքաղհանավարից հետո և վոր այդ աշխատանքը բրիգադը պետք է կատարի—արեվածադկինը 10 որում, իսկ յեզիպտացորենինը 12 որում։ Ընդ սին յեզիպտացորենի շարքերի քաղհանը պետք է սկսել արեվածադկի քաղհանն սկսե ուց վեց որ հետո։ Արեվածադկի շարքամիջերի տարածությունն է 60 սմ., իսկ յեզիպտացորենինը—90 սմ. և կոլտնտեսականի որական աշխատանքին արեվածադկի նկատմամբ 0,20 հեկտար է, իսկ յեզիպտացորենի նկատմամբ—0,30 հեկտար։ Ազրոպլան—կարգադրով արեվածադկի շարքերի առաջին քաղհանը և փխրումը պետք է կատարեն 50 կոլտնտեսականներ 6 որում (8 խմբով), իսկ ֆնացած 4 որում 20 կոլտնտեսականներ (3 խմբով)։ Հենց այդ 4 որում պետք է կատարեն նույն աշխատանքն յեզիպտացորենի դաշտում 30 կոլտնտեսականներ (6 խումբ), վորոնք յեկել են արեվածադկի դաշտից։ Մնացած 8 որում յեզիպտացորենի դաշտում պետք է աշխատեն 35 կոլտնտեսականներ (5 խումբ)։

Ազրոպլան-կարգադրի հիման վրա բրիգադիլն յուրաքանչյուր խմբին առաջադրություն է տալիս ըստ աշխատանքի ծավալի, նշանակելով նրա կատարման ժամկետը։ Որինակ, յեզիպտացորենի վրա աշխատող 5 խմբերից ամեն մեկին (յուրաքանչյուր խմբում 6-ական կոլտնտեսական), բրիգադիլն առաջադրություն է տալիս 12 որվա ընթացքում կատարել շարքերի քաղհանը յեզիպտացորենի 21,6 հեկտար տարածությունը փխրացնելու հետ միասին ($0,3 \times 6 \times 12$)։ Իր հերթին, այդ խմբերից յուրաքանչյուրում ամեն որ ամեն մի կոլտնտեսականին կարող է խմբի աշխատավայրում առանձնացվել, մոտավորապես որական արտադրողականություն յանհ-

մանների յեզիպտացորենի վորոշ քանակությամբ շարքեր, այն պայմանով, վորպեսզի 12 որվա ընթացքում յուրաքանչյուր կոլտնտեսական շարքերը քաղհանի, փխրացնելով յեզիպտացորենի 3,6 հեկտար (0,3×12) տարածությունը (այս դեպքում տարածությունը կարող է վորոշվել ամեն մի կոլտնտեսականի քաղհանած յեզիպտացորենի շարքերի քանակով):

Իրա հետ միասին բրիգադիրը պարտավոր է ցույց տալ կոլտնտեսականներին աշխատանքի տեղը և հրահանգել նրանց — աշխատանքի առաջադրության հարցերի վերաբերյալ:

Բրիգադիրը ծանոթացնում է խմբավարներին և խմբերի բոլոր մասնակիցներին այս կամ այն աշխատանքի ընուկթին, նրանց կատարման ագրոտեխնիկական ձևերին, աշխատանքի բոլոր վորակական ցուցիչներին և աշխորերի իջեցման չափին — նրանց դերակատարման համար, ծանոթացնում է առաջադրության կատարման ժամկետներին, աշխատաչափերին, աշխատանքի դնահատմանը և այլն: Որինակ, տվյալ բույսի ձիաքաղհանավարը կատարելու համար ցույց է տրվում՝ վորտեղ պետք է կատարվի քաղհանավարը և ինչքան ժամանակում, ինչքան է որական աշխատաչափը, աշխատանքի դնահատումը, ինչպես պատրաստել և ինչ լաշնության ընդգրկել տալ կուլտիվատորը, վորպեսզի չկտրատվեն մշակվող բույսերը, ինչպես պետք է աշխատի կուլտիվատորը, վոր լրիվ վոչնչացնի մոլախոտերը և փխրացնի շարքամեջերը, ինչպես պետք է դասավորվեն կուլտիվատորներն արտում (загон) և այլն:

Խմբակային առաջադրությունը կատարելիս թույլ չի տրվում կոլտնտեսականներին մի խմբից մյուսն անցնելու: Խմբերի կազմը վորոշ կոլտնտեսականներով նպաստում է աշխատանքի իրացվելնային աշխատանքի և սոցմրցան ու հարվածայնության դարգացմանը:

Հողամասում կոլտնտեսականների դասավորումը միմիանց մոտ ապահովելու համար, վորն աշխատանքները լավ ղեկավարելու, հսկողության և աշխատանքի հաշվառման համար, նույնպես և սոցմրցման համար նշանակութուն ունի, նպատակահարմար է յուրաքանչյուր բանվորական խմբակի համար ընտրել քաղհանադաշտ (загон), վորը հավասար լինի մոտավորապես որական արտադրողականությանը Հենց այդ նպատակով խմբերի համար պետք է դաշտն (загон) ընտրել վոչ 100 հեկտարային վանդակի ամբողջ յերկարությամբ, այլ նրա կեսը, վորպեսզի աշխատանքի ժամանակ կոլտնտեսականներն իրարից շատ հեռու չգտնվեն: Այս կամ այն շարքահերկ բույսի դաշտի տարածու-

թյունը հեշտ է վորոշել շարքերի քանակով, քանի վոր հայտնի է շարքամեջերի լաշնությունը և դաշտի յերկարությունը:

Նպատակ ունենալով կոլտնտեսականներին դասավորել հողամասում իրար մոտիկ, 100 հեկտարային վանդակը, վորտեղ ցանված է յեզիպտացորեն, բաժանվում է յերկու մասի, շարքերը կտրող գծով: 5 խմբերից յուրաքանչյուրին հարյուր հեկտարային վանդակի մեկ կիսում տրվում է կից հողամաս, մոտավորապես խմբի որական արտադրողականության տարածությամբ: 6 կոլտնտեսականից բաղկացած խմբին տրվում է 42 շարք (խմբի որական արտադրողականությունը), իսկ 7 կոլտնտեսականից բաղկացած խմբին — 49 շարք, 4-րդ խումբը վերջացնելով իրեն հատկացրած տարածության քաղհանն — որական արտադրողականության ծավալով, անցնում է նույն արտադրողականության ցանքամասը, վորն ընդհուպ միանում է 5-րդ խմբի ցանքամասին: Այդ նույն ձեվով ել անցնում են մյուս ցանքամասերին հետևիողաբար 2-րդ, 1-ին և 5-րդ խմբերը: Խմբերի այդպիսի դասավորումն ստեղծում է պայմաններ, տեղավորելու խմբերին ու կոլտնտեսականներին իրար մոտիկ, վորի շնորհիվ հեշտանում է աշխատանքների ղեկավարությունը, նրանց հսկողությունն ու հաշվառումը, նույնպես և ստեղծվում են պայմաններ, ծավալելու խմբերի և առանձին կոլտնտեսականների միջև սոցմրցումը և նրա արդյունքների հաշվառումը:

Հողամասերի այդ անսակ դասավորությամբ յերևան են գալիս հարվածային խմբերը և կոլտնտեսական հարվածայինները, նույնպես և հետ մնացած խմբերն ու կոլտնտեսականները: Աշխատանքի պրոցեսում առաջինները տեղավորվելու յեն առաջին շարքերում, իսկ յերկրորդները — հետին շարքերում:

Քաղհանողներին խմբում կարելի է դասավորել մի քանի շարք իրարից հեռու կամ իրար կողքի: Կոլտնտեսականների դասավորման առաջին ձևը լավ է նրանով, վոր հեշտացնում է յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի վորակի հաշվառումը:

ԲՐԻԳԱԴԻ ՍՊՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՇՏՈՒՄ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԳԸ

Կոլտնտեսային աշխատանքի փորձը ցույց է տալիս, վոր վրանների վատ սպասարկումը կամ սպասարկման բացն աշ-

խատանքի վայրում, հասարակական սննդի, մանկամուրի կուլտ-դաստիարակչական աշխատանքի բացերն, հանդիսանում են աշխատանքի դիսցիպլինայի անկման, աշխատանքի ժամանակի տեվողության կրճատման և, հետևաբար, աշխատանքի արտադրողականության իջեցման պատճառ:

Կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին լայն հավով բրիգադի արտադրական գործունեություն մեջ զրավելու շատ կարեվոր պայման է հանդիսանում բրիգադի արտադրական խորհրդակցությունների ճիշտ աշխատանքը, անմիջապես մշակելու քաղհանային աշխատանքների ագրոպլան-կարգադրի բոլոր հարցերը: Այդ խորհրդակցությունների փորձը կոլտնտեսություններում ցույց է տալիս, վոր նրանք հսկայական դեր են խաղում բրիգադի արտադրական կյանքում, ագրոտեխնիկային տիրապետելու գործում, աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման պայքարում, մանր սեփականատիրական սովորությունների և ունակությունների վերացման խնդրում:

Շարքահերկ-տեխնիկական բույսերին խնամելու ագրոպլան-կարգադրին ամենալավ ձևով կազմված կլինի այն ժամանակ, յերբ նա իր բոլոր մանրամասնություններով մշակվի բրիգադային արտադրական խորհրդակցություններում, ներգրավելով կոլտնտեսականների լայն մասսաներին: Այդ խորհրդակցություններում պետք է մշակվեն շարքահերկ-տեխնիկական բույսերի խնամքի ագրոտեխնիկական ձևերը, աշխատանքների վորակական ցուցիչները, գործավարձի իրականացման ձևերը, քաղհանային աշխատանքների աշխատաչափը, նրանց գնահատումը, սոցմրցումն իրականացնելու և նրա արդյունքները հաշվառելու միջոցառումները և այլն:

Արտադրական խորհրդակցությունները հանդիսանալով մասսայական հսկողություն և հասարակական-դաստիարակչական աշխատանքի ձև, եյական ոգնություն են ցույց տալիս բրիգադիներին—արտադրության կազմակերպության հարցերում: Նրանք ապահովում են կոլտնտեսականների ինքնադործունեությունը և նախաձեռնություն լայն ծավալումը: Դրա համար անհրաժեշտ են, վոր բրիգադիներ հանձն առնի նախաձեռնությունը բրիգադի արտադրական խորհրդակցությունների սիստեմատիկ և պլանայափ կազմակերպության գործում:

Միայն այդ պայմանով արտադրական խորհրդակցությունները կարող են կատարել իրենց հիմնական խնդիրը—նպաստել քաղհանային աշխատանքների կազմակերպությանն ու կատարմանը գործավարձի և սոցմրցման հիման վրա, բարձ-

րացնել աշխատանքի արտադրողականությունը, կոլտնտեսականների միջև աշխատանքի դիսցիպլինա մտցնել:

Բացի այդ, աշխատանքի դիսցիպլինա հաստատելու համար մեծ նշանակություն ունեն կոլտնտեսային ընկերական դատերը: Նրանք լրիվ կերպով արդարացրին իրենց խնդիրները: Ընկերական դատերն իրոք դարձան արտադրական դատեր: Աշխատանքային դիսցիպլինայի պայքարում ընկերական դատերն աղղելով կիսազիտակից կոլտնտեսականների վրա, ցույց են տալիս կոլտնտեսություն-իսկական ոգնություն: Այն կոլտնտեսություններում, վորտեղ այդ դատարաններն աշխատում են ճիշտ, համարյա ապահովվում է աշխատանքի լրիվ յեղը: Դրա համար նպատակ ունենալով հաջողությամբ կատարել քաղհանային աշխատանքները, կոլտնտեսությունները պարտավոր են ապահովել ընկերական դատարանների աշխատանքի մշտական ղեկավարությունը:

Հասարակական-մասսայական աշխատանքի մյուս ձևերը հանդիսանում են՝ շարժական կինոն, ռադիոն, դասախոսություններն ու զրույցները, թերթերի ընթերցումն և այլն:

Այդ միջոցառումները նույնպես պետք է լայն կերպով գործադրվեն կոլտնտեսություններում, աշխատանքի ընդմիջումներին:

Կոլտնտեսային աշխատանքի փորձը ցույց է տալիս, վոր աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում ահագին նշանակություն ունի վրանների կազմակերպումը դաշտում, հասարակական սննդի և մանկամուրի կազմակերպությունը կոլտնտեսությունում: Ընդհանառակն, այն կոլտնտեսություններում, վորտեղ այդ միջոցառումները չեն կիրառված կամ թույլ են զարգացած, զգալի ցածրանում են աշխատանքային դիսցիպլինան, աշխատանքի յեղները, բանվորական որվա տեվողությունը, վորոնք վերջին հաշվով պակասեցնում են աշխատանքի արտադրողականությունը:

Հաշվի առնելով այդ բանը, բնակավայրից ավելի քան 3 կիլոմետր հեռու գտնվող բրիգադային հողամասերում պետք է կազմակերպվեն վրանակայաններ (տաբոր), վորպեսզի կոլտնտեսականները դիչերեն և պաշտպանվեն վատ յեղանակներից: Վրանատեղի ընտրությունը վորաշվում է արտադրության պայմաններով: Նպատակահամար է վրանը տեղավորել արտադրական աշխատանքների և շարքահերկ-տեխնիկական բույսերի տեղավորման կենտրոնում, վորտեղ աշխատանքներն են կատարվում և ճանապարհների մոտիկ: Վրանները պետք է ու-

նենան ծածկ (գործիքների համար), ձիակապեր, շարժական սաշտեր լծկանի համար, նույնպես և ժամանակավոր խոհանոցներ: Վրանների և ժանուկթյան համար վերջիններս հանձնարարվում են շինել եփան նյութերից (ծղոտ, կալ, ցախ, յեղեղն և այլն), վորոնք պատրաստվում են տեղերում:

Հյուղակներ (վրանների) մոտ սովորաբար բերում են կերը և անհրաժեշտ նյութերը: Կերի բերումը պետք է կատարվի նախորոք և ըստ կարելույն այն որերին, յերը կոտնտեսականներն ավելի քիչ են զբաղված լարված աշխատանքով: Այդ բոլոր աշխատանքները բրիգադում կատարում են մի հատուկ խումբ: Նրա քանակը կախված է հողամասի հեռավորությունից մինչև բնակավայրը, ջրհորը և այլն: Այն հյուղակները, վորոնք կազմակերպվել են շարքահերկ բույսերի ցանքի ժամանակ, կարող են ոգտագործվել և քաղհանի ժամանակ:

Դաշտում հասարակական սնունդ կազմակերպելու վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Նա նպաստում է դաշտային աշխատանքների հաջող կատարմանը, ազդում է աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա: Ընդհակառակն, անհատական սնունդի փորձը դաշտում ցույց է տալիս, վոր այդ դեպքում ժամկետական ժամանակի կատարացի տեղում թյուռնն ավելի քիչ է, անվերջ ընդմիջումների յերկարություն պատճառով, աշխատանքի դիսցիպլինան և արտադրողականությունն իջնում են:

Հասարակական սնունդը պետք է կազմա կեպել կոտնտեսականների միջոցներով: Կոտնտեսուհիներին պետք է ներդրվել սննդամթերք հավաքելու կոտնտեսականներից և հակելու, վոր ճիշտ ոգտագործվեն հասարակական սննդի համար հավաքված մթերքները: Այդ աշխատանքը ավելի լավ կարող են կատարել կոտնտեսուհիները:

Կոտնտեսային արտադրության մեջ պակաս նշանակություն չունի նայել յերեխաների կոլեկտիվ խնամքի, մանկամսուրի, մանկահրապարակի կազմակերպումը դաշտային աշխատանքների ընթացքում: Այդպիսի կենցաղային միջոցառումները նպաստում են կանանց ազատվելու յերեխաների խնամքից և ապահովում են կանանց լրիվ մասնակցությունն այնպիսի աշխատանքներում, ինչպես շարքահերկ բույսերի քաղհանը, վորը կոտնտեսականներից շատ աշխատանք է պահանջում:

Կոտնտեսուհի-մայրերը դաշտում աշխատելիս նպատակահարմար է կազմակերպել ծծկեր յերեխաների համար դաշտային

շարժական մսուրներ վրաններում կամ վագոնիկներում: Մսուրների աշխատանքի հաջողության համար վճռական նշանակություն ունի յերեխաների կանոնավոր սննդի կազմակերպումը: Վերոհիշյալ միջոցառումներն անհրաժեշտ էր անցկացնել դեռևս վարնանացանի կամպանիային: Այն կոտնտեսությունները, վորտեղ այդ միջոցառումները չեն կազմակերպված կամ թույլ են աշխատում, պարտավոր են կիրառել կյանքում այդ միջոցառումները շարքահերկ-տեխնիկական բույսերի խնամքի դաշտային աշխատանքների սկզբին:

ՔԱՂՀԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոպլան—կարգադրի աշխատանքների կատարման գործում անմիջական ղեկավարություն իրականացնում է բրիգադիրը: Նա հանդիսանում է բրիգադի արտադրության կազմակերպողն ու ղեկավարը:

Բրիգադիրը մշտապես և ճիշտ պետք է ղեկավարի կոտնտեսականների կատարած բոլոր դաշտային աշխատանքները: Այդ բանին նպաստում են գործավարձի քննարկված ձևերը քաղհանային աշխատանքներում, խմբերի և կոտնտեսականների դասավորության յեղանակները:

Դաշտային աշխատանքների ժամանակ բրիգադիրը գլխավոր ուշադրություն դարձնում է այն բանի վրա, վոր խմբերն աշխատեն լրիվ կազմով, վորպեսզի կոտնտեսականները կատարեն աշխատանքը նախորոք տված ցուցմունքներով, ճիշտ տեղավորվեն հողամասում, կատարեն վորակական բոլոր ցուցիչները, աշխատաշավր և այլն:

Աշխատանքներում նկատված թերությունները բրիգադիրը պետք է անմիջապես վերացնի: Որինակ, աշխատանքի ստուգման կարգով նկատված վատ քաղհանը, պոկումը, (չորացումը) ստուգումն և այլն կոտնտեսականները պետք է անմիջապես ուղղեն, բրիգադիրի ցուցմունքների համաձայն:

Խմբավարն ոգնում է բրիգադիրին, հետեվելու կոտնտեսականների կատարած սուադարություններին: Խմբավարն ուշադրություն է դարձնում, վոր խմբի անդամները վորակական ցուցիչների վերադրյալ աշխատանքը կատարեն բրիգադիրի ցուցումների համաձայն: Նա ոգնում է բրիգադիրին հաշվառելու կոտնտեսականների կատարած աշխատանքի քանակն ու վորակը:

№ կարգագրի կատարման մասին 1932 թ.

կատարված են հետևյալ աշխատանքները

Ցուցիչները		Աշխատանքների անունը
Կատարած աշխատանքի ծավալը		
Են կատարված է	Վ ա տ	
	Շ ա տ Վ ա տ	
Մասնակցել են	Տղամարդ	
	Կ ի ն	
	Պատանիներ	
	Նրանցից հարվածախններ	
Աշխատանքի չեղածների քանակը		
Լծկան ուժը	Ձ ի ե ը	
	Յ ե զ ն ե ը	
	Ու լ զ տ ե ը	
Սեփեմաներ և գործիքներ		
Նյութերը և սերմերը և այլն		

Բրիգադի կատարած աշխատանքի ծավալի և վորակի մասին բրիգադիներն ամեն որ հաղորդում են կոլտնտեսություններին վարչությունները: Այդ տեղեկությունները նա տալիս են վորոշված ձևով: Հանձնարարվում են տեղեկություն 30-րդ եջի ձևով: Այդպիսի ամենորյա տեղեկությունները ծանոթացնում են կոլտնտեսության վարչությանն ագրոպլան-կարգագրի կատարման ընթացքին և հնարավորություն են տալիս վարչությունը ճիշտ դեկավարել բրիգադներին: Բացի այդ, բրիգադների աշխատանքների ընթացքին ծանոթանալը և նրանց դեկավարությունը վարչությունն իրականացնում են սխտեմատիկ կենդանի կապի միջոցով բրիգադների և բրիգադիւրների հետ, անմիջապես ստուգելով աշխատանքների ընթացքը հողամասերում:

Բրիգադների ագրոպլան-կարգագրերի կատարման նկատված ճեղքվածքները, թերությունները կոլտնտեսության վարչությունը պետք է անմիջապես վերացնի, ձեռք առնելով համապատասխան միջոցներ:

Աշխատանքները սովորաբար դեկավարում են կոլտնտեսության անդամները և գյուղատնտեսը, վորոնք վարում են աշխատանքի տվյալ ճյուղը:

Կոլտնտեսության վարչությունը բրիգադի աշխատանքի ամբողջ պատասխանատվությունը դնելով բրիգադիւրի վրա, չպետք է միջամտի կոլտնտեսականների աշխատանքների անմիջական դեկավարության մեջ: Մյուս կողմից բրիգադիւրը պարտավոր է հանդես բերել նախաձեռնություն, ինքնագործունեություն և բրիգադի աշխատանքների լրիվ դեկավարություն, չսպասելով կոլտնտեսության, վարչությունից ցուցմունքների արտադրական յուրաքանչյուր մոմենտի վերաբերյալ:

Կուսակցական, խորհրդային և կոմյերիտական կադմակերպությունները չպետք է կոլտնտեսության, նրա բրիգադների արտադրական գործունեությունից մի կողմը մնան: Կոլտնտեսությունների այն թերությունները, վորոնք տեղի ունեցան անցյալ տարվա քաղհանային կամպանիայում, ցույց են տալիս, վոր շատ տեղերում անբավարար է յեղել կուսակցական կադմակերպությունների դեկավարությունը կոլտնտեսությունների արտադրական կյանքի նկատմամբ: Այդ բացն ողտագործում է յին հակախորհրդային տարրերը գյուղում, վորոնք ձգտում են յին ամեն կերպ արգելափակել հզոր ծավալվող կոլտնտեսային շինարարությունը:

Այդ պատճառով քաղհանային աշխատանքների հաջող կատարման, կուլակային ագրիտացիայի վճռական հակահարված տալու համար միայն կոլտնտեսությունների վարչությունների և բրիգադիւրների ջանքերը կոլտնտեսությունում անբավարար են: Գյուղի կուլակցական կադմակերպությունները, կոլտնտեսությունների կուլակցական բջիջները պետք է ամեն կերպ ոգնեն կոլտնտեսությունների վարչությունը, բրիգադիւրներին, քաղհանային կամպանիան հաջող կատարելու, պայքարելու բերքի համար, մորիիդացիայի յենթարկելու կոմունիստներին և կուլակցությունների թեկնածուներին, կոլտնտեսային լայն մասսաներին՝ սոցմոցման և շարքահերկ—տեխնիկական բուլսերի խնամքի աշխատանքի ճիշտ կատարման համար:

Սորհրդային, կուլակցական և հասարակական կազմակերպությունների ուղադրությունը նույնպես դարձված պետք է լինի քաղհանի պլանների կատարմանն աջակցելու կողմը:

Մեքենատրակտորային կայանները և ռայկոլտնտնությունները պետք է ցույց տան կոլտնտեսություններին ուղղակի անմիջական ոգնություն, կազմելու բրիգադներում քաղհանային աշխատանքների կատարման ագրոպլան—կարգագիրը և կազմակերպելու այդ կարգագրերի կատարումը:

ԿՍՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Քաղհանային աշխատանքների հաջող կատարման վճռական մոմենտ է հանդիսանում աշխատանքի ճիշտ և ժամանակին հաշվառումը: Կոլտնտեսականն ավելի լավ կկատարի արտադրական առաջադրությունը, յեթե նա հավատացած է, վոր իր աշխատանքը բրիգադում ճիշտ են հաշվառում: Առանց հաշվառման չի կարող լինել և գործավարձ: «Կորտեղ չկա հաշվառում, այնտեղ չկա խոշոր տնտեսություն, վորտեղ չկա հաշվառում—չկա և կոլտնտեսություն, վորպես կազմակերպված տնտեսություն: Ահա թե ինչու հաշվառումը կոլտնտեսություններում այժմ մեզ համար վճռական խնդիր է» (ընկեր Յակովլևի զեկուցումից խորհրդների VI համագումարին՝ կոլտնտեսային շինարարություն մասին):

Մինչդեռ շատ կոլտնտեսային աշխատողներ թերազնահատում են աշխատանքի հաշվառումը կոլտնտեսություններում: Շատ կոլտնտեսություններում աշխատանքի հաշվառումը կատարվում է անփուլյթ, վոչ իր ժամանակին, աշխատանքի վորակը հաշվի չի առնվում, աշխատանքային գրքույկները հաճախ յերկար ժամանակ չեն տրվում կոլտնտեսականներին:

Աշխատանքի հաշվառման բոլոր թերությունները պետք է վերջնականապես վերանան:

Աշխատանքի հաշվառումը պետք է կատարվի ամեն օր: Կոլտնտեսականների աշխատանքը հաշվառելիս պետք է նկատի առնել վոչ միայն նրանց կատարած աշխատանքի քանակը, այլև աշխատանքի վորակը: Չի կարող լինել գործավարձ առանց աշխատանքի վորակի հաշվառման:

Կոլտնտեսականների աշխատածի ամենօրյա հաշվառումը խմբում գործնականապես կատարում է խմբավարը—բրիգադիւրի ցուցմունքով և դիտողությամբ: Կոլտնտեսականի կատարած քաղհանային աշխատանքի հաշվառումը կարող է փաստորեն կատարվել յեդիպտացորենի, արևածաղկի կամ ուրիշ բույսի քաղհանած շարքերի քանակի համեմատ, յեթե տվյալ շարքահերկ բույսի շարքերի լայնքը միատեսակ է: Իմանալով շարքամիջերի լայնությունը, արտի (загон) յերկարությունը և արտի շարքերի քանակը, դժվար չէ վորոշել արտի մակարդակը: Քանակական հաշվառման այդպիսի ձևվը հեշտացնում է հաշվառումը:

Աշխատանքի քանակի հաշվառման հետ միաժամանակ պետք է կատարվի նաև աշխատանքի վորակի հաշվառում: Աշխատանքի վորակի մասին կարելի յե դատել տվյալ աշխատանքի վորակական ցուցիչների կատարման աստիճանով:

Յուրաքանչյուր գործավարձային աշխատանք զնահատվում է համաձայն կոլտնտեսությունում ընդունված աշխատանքի միավորի զնահատման, յեթե կոլտնտեսականը կատարել է աշխատանքը բավարար, ճիշտ: Հակառակ դեպքում վատ աշխատանքի համար իջեցվում են կոլտնտեսականին նշանակված աշխատանքի օրերը: Յերկրկոլտնտնությունների վարչությունների վորոշումով աշխուրների իջեցման չափը նշանակված է մինչև 25 տոկոս—վատ աշխատանքի դեպքում, իսկ շատ վատ աշխատանքի դեպքում՝ 25-35 տոկոս:

Դրան համապատասխան աշխուրների իջեցման չափը վատ կամ շատ վատ աշխատանքի համար, տվյալ աշխատանքի վորակական ցուցիչները չկատարելու համար կարող է վորոշվել յուրաքանչյուր վորակական ցուցիչի նկատմամբ առանձին: Աշխուրների իջեցման չափը վորոշվում է համաձայն այս կամ այն վորակական ցուցիչի նշանակության բերքի բարձրացման համար: Որինակ, քաղհանավարի այնպիսի վորակական ցուցիչ, ինչպես կուլտիվատորի ճիշտ աշխատանքն է, վոր չկտրի բույսերը շարքերում, մեծ աղդեցություն ունի բերքի բարձրաց-

ման համար, քան թե կուլտիվատորի սարքադրումը նրա կտրող մասերի սրումով: Այդ պատճառով առաջին վորակական ցուցիչը չկատարելու համար պետք է ավելի իջեցվեն աշխուրհը, քան յերկրորդը չկատարելու համար:

Աշխուրհի իջեցման համեմատական տախտակն աշխատանքի վորակական ցուցիչները չկատարելու համար-տրվում է վորակական ցուցիչների ստանդարտին դուգընթաց (տես առաջին հավելված):

Աշխատանքի վորակը բավարար կատարելու համար կուտնտեսականի աշխուրհն ավելացում չի լինում, վորովհետև կուտնտեսությունում աշխատանքների գնահատումը վորոշելիս նախատեսված են այն աշխատանքները, վորոնք պետք է կատարվեն ճիշտ, իրենց բոլոր վորակական ցուցիչներով:

Յեթե աշխատանքի պայմանները թույլ են տալիս, բրիգադիրը պարտավոր է առաջարկել կուտնտեսականին, վերահատարել վատ կատարած աշխատանքը, ըստ վորում աշխատանքի վերակատարման համար կուտնտեսականին նոր աշխուրհն հաշվում:

Հանձնարարվում է աշխատանքի վորակի հաշվառման հետևյալ պարզված ձևը—

1. Այն դեպքում, չերա աշխատանքի վորոշված վորակական ցուցիչներից մեկը վատ է կատարված և յեթե այդ ցուցիչը վճռական չի հանդիսանում բերքի բարձրացման գործում (այդ ցուցիչի աշխուրհի իջեցման չափը 5-7 տոկոսից ավել չէ), իսկ մյուս ցուցիչները կատարված են բավարար, աշխատանքի այդպիսի վորակի կատարումը կարելի չէ բավարար համարվել:

2. Յեթե վորոշված վորակական ցուցիչների կեսը բավարար է կատարված, իսկ մնացածները վատ կամ շատ վատ, այդ դեպքում կատարված աշխատանքի վորակը կարող է համարել վատ:

3. Իսկ յեթե բոլոր վորակական ցուցիչները կամ նրանց զգալի մասը վատ կամ շատ վատ են կատարված, այդ դեպքում կատարված աշխատանքի վորակը պետք է շատ վատ համարել:

Յենթադրենք, թե կուտնտեսությունում հաստատված է աշխուրհի իջեցման 3%-ը ելի տախտակը յեզիպտացորենի շարքամիջրի ձիաքաղահանավարի վորակական ցուցիչները չկատարելու համար:

Յեթե այդ աշխատանքն ստուգելիս վորոշված է, վոր առաջին վորակական ցուցիչը վատ կամ շատ վատ է կատարված, իսկ մնա-

ցածները բավարար, այն դեպքում ամբողջ աշխատանքը կհամարվի բավարար կատարված, վորովհետև այդ վորակական ցուցիչը չի հանդիսանում վճռական (յերեվում է աշխուրհի իջեցման տոկոսների համեմատությունից) յեզիպտացորենի բերքի բարձրացման գործում:

Յեզիպտացորենի ձիաքաղահանավարի վորակական ցուցիչները	Վորակական ցուցիչները չկատարելու համար աշխուրհի իջեցման տոկոսները	
	Վատ աշխատանքի դեպքում	Շատ վատ աշխատանքի դեպքում
1. Կուլտիվատորի պատրաստումն ու սարքավորումը-բանելու համար, կարող մասերի սրումով	3	5
2. Կուլտիվատորի ճիշտ աշխատանքն առանց կտրելու բույսերը շարքերում և թաղելու նրանց հողում	12	15
3. Մոխրոտների լրիվ մոնչացումը և շարքամիջրի փխրումը	10	15
	25%	35%

Իսկ յեթե չի կատարված մնացած յերկու աշխատանքի վորակական ցուցիչներից մեկը, վորոնք (ցուցիչները) վճռական աղղեցություն ունեն բերքի վրա, այդ դեպքում աշխատանքը պետք է համարել վատ կատարված:

Յերեք վորակական ցուցիչները կամ նրանցից յերկուսը շատ վատ կատարելու դեպքում աշխատանքը պետք է համարել շատ վատ:

Առաջին դեպքում կուտնտեսականի աշխուրհը չեն իջեցվում, բայց յերկրորդ դեպքում, վատ աշխատանքի դեպքում աշխուրհն իջեցվում են 10 կամ 12 տոկոս, իսկ շատ վատ աշխատանքի դեպքում (յերրորդ դեպք) իջեցվում են 20—35 տոկոս:

Կուտնտեսականների կատարած աշխատանքների քանակական և վորակական հաշվառումը հանձնարարվում է կատա-

37

Կատարված առաջադրության յեվ ամենոր աշխատող կոլեկտիվի
կանոններ լծկանի ու գործիքների հաշվառում

		ամսվա որերը				և այլն
		1		2		
		վերջին տուր	փաստորեն	վերջին տուր	փաստորեն	
Աշխատել են կոլեկտիվի կանոններ	Տղամարդիկ					
	Կին					
Լծկան	Ձիյեր					
	Յեղներ					
Գործիքներ						
Առաջադրության կատարումը լսողական աշխատանքի տեսակների						

Բրիգադի կատարած աշխատանքն ընդունում է հանձնաժողովը: Բաղկացած տվյալ ճյուղը կառավարող վարչության անդամից և մրցող բրիգադիների ներկայացուցիչներից: Ընդունված

նեղությունը պետք է տեղի ունենա աշխատանքի տեղը դաշտում դիտելով: Ընդունելության արդյունքները նշանակվում են ագրոպան-կարգադրում: Աշխատանքի ընդունելությունն անհրաժեշտ է կատարել, յերբ բրիգադը վերջացնում է աշխատանքի յուրաքանչյուր տեսակը (մաքրում, 1-ին քաղհանավար, շարքերի քաղհան և այլն):

Յեթե բրիգադը չկատարի աշխատանքի վորակական ցուցիչները բրիգադիների հանցանքով, այդ դեպքում իջեցվում են ըստ գործավարձի բրիգադիների հասանելիք աշխուրբը մինչև 30 տոկոս, նայած վորակական ցուցիչները չկատարելու աստիճանին:

Այն դեպքերում, յերբ աշխատանքն ընդունելու ժամանակ պարզվում է, վոր բրիգադիները սխալ է վորոշել բրիգադի աշխատանքի վորակը, կոլեկտիվության վարչությունը կարող է վորոշ քանակությամբ իջեցնել ամբողջ բրիգադի աշխուրբը: Դրան համապատասխան բրիգադի ներսում լրացուցիչ կերպով իջեցվում են անբարեխիղճ աշխատող կոլեկտիվականների աշխուրբը, վորոնք արդեն իջեցվել էին աշխատանքի վատ վորակի համար: Լրացուցիչ իջեցումը պետք է կատարվի առաջին իջեցման քանակի համեմատությամբ:

ԲԾՂՀԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ

Շարահերկ բույսերի խնամքի աշխատանքն անհրաժեշտ է կատարել հիստ ժամանակին

Բերքի բարձրացման պայքարի, գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման կարևորագույն ողակներից մեկը հանդիսանում է բույսերի ճիշտ է ժամանակին խնամքը: Առանձին նշանակություն ունի շարքահերկ և տեխնիկական բույսերի ցանքի խնամքը (յեգիպտացորեն, արևածաղիկ, գինեգեղձակ, սոյա, բամբակ, ծխախոտ, բոստաններ, շաքարի և կերի ճակնդեղ, սորգո, հացահատիկային, լոբեցեղ և ուրիշ բույսեր): Շարքահերկ և տեխնիկական բույսերը խնամելիս քաղհանը և ագրոտեխնիկական մյուս պահանջների կատարումը վճռական նշանակություն ունի: Ճիշտ է ժամանակին խնամելիս նրանք տալիս են լավ բերք, իսկ վատ և ուշացած խնամքի դեպքում բերքը շատ քանակ պակասում է, իսկ յերբեմն վոշնչանում է: Այդպես, որինակ՝ մինչև 1929 թիվը շարքահերկ և տեխնիկական բույսերը գյուղական անհատական հողամասերում տալիս էին շատ ցածր բերք (կամ շատ

անգամ գյուղացիները վոչ մի բերք չեյին ստանում), վորովհետև այդ բույսերը ինչպես պետքն է, չեյին խնամվում: Չքավոր է միջակ տնտեսություններին թուլությունը, դործիքների և լծկանի պակասը, շարքահերկ և տեխնիկական բույսերի մշակման ճիշտ ձևերը չիմանալը պատճառ եյին լինում, վոր վերոհիշյալ բույսերի բերքը շարունակ ցածր էր լինում և արտադրանքի վորակն էլ հաճախ անբավարար:

Սակայն 1930 թվից, յերբ Խորհրդային Միության հիմնական շրջաններում և մասնավորապես մեր յերկրամասում սկսվեց համատարած կոլեկտիվացումը, յերբ չքավոր—միջակ տնտեսությունների ճնշող մեծամասնությունը Հյուս. Կովկասում մտալ կոլտնտեսությունները, վերաբերմունքը շարքահերկ և տեխնիկական բույսերի նկատմամբ փոխվեց, այն էլ դեպի լավը: Շարքահերկ և տեխնիկական բույսերի տարածությունն սկսեց զգալի չափով ավելանալ, սկսեցին նրանց վրա մեծ ուշադրություն դարձնել, ավելի լավ խնամել: Բայց շարքահերկ բույսերի խնամքի վերաբերյալ մենք դեռ չունենք բավարար հաջողություններ: Շարքահերկ և տեխնիկական բույսերի բերքը մենք դեռ զգալի չափով պակաս ենք հավաքում: Հողաշերտի վատ պատրաստումից, սխալ և վոչ իր ժամանակին կատարված ցանքից, իսկ, վոր գլխավորն է, վատ և ուշացած խնամքից առաջացած կորուստներն յերբեմն մեծ չափերի յին հասնում:

1930 թվին մեր յերկրամասի մի քանի ուսումնական վոչ իր ժամանակին խնամելու հետևանքով շարքահերկ բույսերը վատ բերք տվին (իսկ մասամբ էլ ամառվա սաստիկ յերաշտի պատճառով):

1931 թվին մեր յերկրամասում այն խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում, վորոնք յեզիպատացորենը մշակել եյին լավ և ժամանակին, հեկտարից ստացվեց մինչև 30 ցենտներ բերք: Այդպիսի բերք հավաքվում էր առաջավոր խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում, վորտեղ իր ժամանակին եյին անցկացրել յեզիպատացորենի շարքամիջերի և շարքերի քաղհանը: Բոլորովին ուրիշ պատկեր էր ստացվել յեզիպատացորենի այն հողամասերում, վորտեղ քաղհան չեր կատարվել, վորտեղ ազատ բանել եյին մոլախոտերը, այնտեղ յեզիպատացորեն չեր հավաքվել:

Մոտավորապես նույն դրությունը կարելի յեր դիտել արևածաղկի և շարքահերկ ու տեխնիկական մյուս բույսերի վերաբերմամբ: Այդպես որինակ, 1931 թվին արևածաղկի մի

հեկտարի բերքը տատանվում էր 13-14 ցենտներից մինչև զերո:

Անհրաժեշտ է նկատի առնել, վոր շարքահերկ բույսերի բերքի վրա վատ է ազդում վոչ միայն նրանց խնամքի բացակայությունը, այլև ժամանակին չկատարելն այնպիսի աշխատանքների, ինչպես շարքամիջային մշակում, փորում և քաղհանում շարքերում: Թե ինչքան վատ է անդրադառնում բերքի քանակի վրա շարքահերկերի վոչ իր ժամանակին խնամելը, յերևում է հետևյալ տվյալներից: «Կուբանի» փորձակայանում (Կուբանում) արևածաղկի բերքը մի հեկտարից ստացվեց 22,5 ցենտներ, ապրիլի 30-ին իր ժամանակին փխրելու հետևանքով, իսկ ավելի ուշ, մայիսի 15 փխրելու հետևանքով բերք ստացվեց մի հեկտարին 20,7 ցենտներ:

Դոնեցկի գյուղատնտեսական փորձակայանի տվյալները նույնպես ցույց են տալիս, վոր փխրումն ուշացնելու դեպքում արևածաղկի բերքն իջնում է 27 տոկոս (մի հեկտարին մոտ 3 ցենտներ և ավելի):

Դեմադրչալի բերքը Կուբանի գյուղատնտեսական փորձակայանում նույնպես սաստիկ իջել է ծիլերը վոչ իր ժամանակին փխրացնելու պատճառով: Այդպես, որինակ, ծիլերի առաջին գույք տերներն յերևալու շրջանում փխրելու դեպքում բերք ստացվել է մի հեկտարին 960 կիլոգրամ, իսկ 5 տերևի յերեվալու շրջանում փխրելիս՝ բերք ստացվել է 859 կիլոգրամ:

Թե ինչքան մեծ նշանակություն ունի շարքահերկ բույսերի բավարար խնամքը, մասնավորապես յեզիպատացորենի խնամքը, յերևում է Արմավրի ուսումնի «Ստալին» խորհտնտեսության ուսլայավոր բույսերն ուսումնասիրելու կայանի հետևյալ տվյալներից: Այդ կայանի դաշտերից մեկում զանազան մշակումների հետևանքով այսպիսի բերք է ստացվել:

1. Շարքամիջերը ձիով մեկ անգամ փխրելիս և շարքերն յերկու անգամ քաղհանելիս մի հեկտարին 18,3 ցենտներ:

2. Շարքամիջերը ձիով յերկու անգամ փխրելիս և շարքերն յերկու անգամ քաղհանելիս մի հեկտարին 24,1 ցենտներ:

3. Շարքամիջերը ձիով փխրելիս և շարքերն յերկու անգամ քաղհանելիս մի հեկտարին 26,9 ցենտներ:

Մեջբերած տվյալներից յերևում է, վոր շարքահերկ բույսերի մշակումն (շարքամիջերի մշակումը և շարքերի քաղհանն) անհրաժեշտ է անպայման անցկացնել, կատարելով ագրոտեխնիկական բոլոր պահանջները: Միայն այդ դեպքում կարելի յե ստանալ ամենաշատ բերք: Գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրացնելու, բերքն ամենամեծ չափով ավելացնելու հա-

մար հարկավոր ե հատուկ ուշադրութիւն դարձնել գյուղատնտեսութեան վորակի հարցերին—հողի լավ մշակելու, խնամելու և իր ժամանակին ամենաքիչ կորուստներով հաւաքը կատարելու հարցերին: Ներկայումս մեզ համար շատ կարեւոր ե կոլտնտեսութեանների և խորհրտնտեսութեանների գործնական կյանքում մտցնել յեղած բոլոր ագրոտեխնիկական նվաճումները: Խորհրդային Միութեան հողօրդով ընկեր Յակովլեւը բերքի բարձրացման խորհրդակցութեան ժամանակ վերոհիշյալ խնդրի վրա հատուկ ուշադրութիւն դարձրեց: «Նրանից հետո, յերբ մենք ստեղծեցինք խորհրտնտեսութեաններ, նրանից հետո, յերբ մենք այդ խորհրտնտեսութեանները ստեղծեցինք նոր բարձր տեխնիկայի նմուշներ և հանձին մեքենատրակտորային կայանների սկսեցինք կիրառել այդ տեխնիկական տասնյակ հազարավոր կոլտնտեսութեաններում, նրանից հետո, յերբ մենք խորտակեցինք բուրժուական գյուղատնտեսների նախապաշարունակները, վորոնք խանգարում էին մեզ կառուցել խոշոր պետական տնտեսութիւն—կոլտնտեսութեանների, նույնպէս և խորհրտնտեսութեանների ասպարիզում արտադրութեան կազմակերպութեան խնդիրը, գյուղատնտեսութեան գիտութեան նվաճումների լայն կիրառման խնդիրը մենք դարձնում ենք հիմնական խնդիր»:

Տեխնիկային տիրապետելու, բերքը բարձրացնելու գործում անհրաժեշտ ե արդեն ընթացիկ տարում ձեռք բերել վճռական բեկում: Կոլտնտեսութեանները և խորհրտնտեսութեանները պետք ե ամեն կերպ ոգտագործեն այն ահագին առավելութեանները, վոր ունի սոցիալիստական տնտեսութեանը: Այդ առնչութեամբ ամենամեծ հաջողութեամբ պետք ե անցկացնել և առաջիկա քաղհանային կամպանիան: Հաշվի առնելով քաղհանային աշխատանքների հատուկ կարեւորութիւնը, յերկրային VII կուսկոնֆերանսը հնգամյակի 4-րդ, ավարտական տարվա գործնական խնդիրների մասին տված բանաձեւովում արել և հետևյալ ցուցումը. «Ընթացիկ տարում ապահովել ուժադիր բաղանք յուրաքանչյուր շաբաթեւի բույսի համար նրա օգտակար ժամկետներին»: Յերկրային VII կուսկոնֆերանսի այդ հրահանգն անհրաժեշտ ե անպայման կատարել:

Շարքահերկ և տեխնիկական բույսի խնամքը պետք ե սկսել անմիջապէս այն ժամանակ, յերբ հայտնվում են նրանց ծիրերը: Նրանց խնամքը գլխավորապէս մոլախոտերի քաղհանն ե, հողի փխրացումը և բացի այդ, շարքահերկ բույսերի մեծամասնութեան համար նույնպէս և ծիրերի նստացումը կամ փո-

րումը: Համարյա բոլոր շարքահերկ ու տեխնիկական բույսերի համար այդ ձևերը հանդիսանում են ընդհանուր: Այդ ձևերը պետք ե կատարել կանոնավոր և ժամանակին: Մոլախոտերի քաղհանը հանդիսանում ե շատ կարեւոր և վերին աստիճանի անհրաժեշտ աշխատանք: Մոլախոտերը խեղդում են կուլտուրական բույսերի ծիրերը և խլում են նրանցից խոնավութեանը ու սննդաբար նյութերը: Իրա համար վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ վոր շարքահերկ բույսերի ծիրերը ծածկվեն մոլախոտերով: Մոլախոտերի դեմ պետք ե համառ և վճռական պայքար տանել: Մոլախոտերը վնասակար են վոչ միայն նրանով, վոր շատ ուժեղ պակասեցնում են շարքահերկ և տեխնիկական բույսերի բերքահաւաքը, այլ նրանք դրա հետ միասին մեծ չափով իջեցնում են դրանից հետո ցանվող հացաբույսերի բերքը, անհրաժեշտ են դարձնում լրացուցիչ մշակել հողաշերտը, իսկ դա իր հերթին ավելացնում ե դաշտային բույսերի արտադրանքի աճեցման ծախսերը և յերկարացնում ե առանձին աշխատանքների կատարման ժամկետները:

Հողաշերտի վերին մասի փխրացումը նպատակ ունի շարքահերկ բույսերի աճման համար ստեղծել ամենալավ պայմաններ: Փխրացնելիս վոչնչանում ե հողակեղեւով, վորը գոյանում ե ուժեղ անձրեւներից հետո հողաշերտի մակերեսին: Իսկ հողակեղեւի ներկայութեանը մի կողմից նպաստում ե հողաշերտի շուտ չորանալուն, իսկ մյուս կողմից հողակեղեւը դժվարացնում ե ողի թափանցումը դեպի բույսերի արմատները և վատ ազդում բույսերի զարգացման վրա: Փխրումն ոգտակար ե անել վոչ միայն այն ժամանակ, յերբ կազմվում ե հողակեղեւը, այլ ընդհանրապէս այն ժամանակ, յերբ հողի մակերեսային շերտը խտանում ե: Մոլախոտերի քաղհանը շարքաւիջերում և հողի փափկումը սովորաբար համատեղվում են մի գործողութեամբ (շարքամիջերի քաղհանավարը):

Շարքահերկ բույսերից շատերը կարիք են գգումնոսրացման և կամ պոկման: Պոկումը պետք ե նրա համար, վոր շարքահերկ և տեխնիկական բույսերի ծիրերի զարգացման համար նրանց տրվի անհրաժեշտ սննդատարածութիւն և ստացվի ամենաբարձր բերք: Պոկումը անհրաժեշտ ե կատարել իր ժամանակին:

Ծիրերի նստացումն ուշանալու դեպքում, վերջիններս զարգանում են ավելի վատ, սաստիկ ձգվում են, թուլանում են և հետագայում տալիս են ցածր տեսակի բերք: Նստացումը

պետք ե կատարվի բույսերի շարքերը քաղհանելու հետ միասին:

Շարքահերկ բույսերի խնամքի աշխատանքները կատարելիս անհրաժեշտ ե նկատի ունենալ, վոր յեզրպտացորենի, արեվածադկի, սորգոյի, սոյայի և մանանխի խնամքի առաջին աշխատանքը պետք ե լինի ծիլերի փոցխումը: Փոցխումը փըխ-րացնելով հողը, կուլտուրական բույսերի աճման համար ստեղծում ե լավագույն պայմաններ, այնուհետև փոցխելու ժամանակ վոչնչանում ե մոլախոտերի մի մասը, իսկ շնորհիվ դրան շարքահերկերի առաջին քաղհանը կարելի յե կատարել վոչ թե ծիլերի յերևալուց անմիջապես հետո, այլ փոցխելուց 5—6 որ անցնելուց հետո:

Իսկ այդպիսի հետաձգումն ունի հսկայական նշանակություն, վորովհետև վորոշ չափով պակասում ե շարքահերկերի առաջին քաղհանի շրջանի լարվածությունը:

Փոցխումը կատարվում ե սովորաբար ատամնավոր փոցխերով ընդհանրապես 1 անգամ, հազվադեպ դեպքում 2 անգամ (խիտ հողաշերտերի և ավելի խիտ ծլումների դեպքում): Ավելի խիտ հողաշերտերի դեպքում պետք ե դործածել ծանր փոցխեր, իսկ թեթև, քիչ մոլախոտերով ծածկված հողամասերում—թեթև փոցխեր: Փոցխումը պետք ե կատարել ձեռքով—շարքերի լայնությունը, իսկ տրակտորով մշակելիս—շարքերի յերկարությունը:

Թե յերբ պետք ե սկսել շարքահերկ բույսերի ծիլերի փոցխումը, ցույց ե տրված առանձին շարքահերկ բույսերի խնամքների միջոցները նկարագրելիս: Մեկ հետք վարելիս յերկու ձին մի որում կարող են վարել մոտ 6—7 հեկտար: Յերբեմն շարքահերկ բույսերը պետք ե լինում փոցխել դեռ մինչև նրանց ծիլերի յերեվալը: Բույսի նոր ծիլերը չվնասելու համար անհրաժեշտ ե աշխատանքը կատարել զգուշությունը: Փոցխելու ժամանակ այդ բանին պետք խիստ հետևել:

Շարքահերկ բույսերը փոցխելուց մի քանի որ հետո, իսկ յեթե փոցխումը տեղի չի ունեցել, այն դեպքում նրանց ծիլերը հայտնվելուց հետո շուտով պետք ե շարքահերկ բույսերը մշակել կամ քաղհանել: Շարքամիջերում մշակումը կատարվում ե ձիաքաղհանիչներով կամ տրակտորաքաղհանիչներով, իսկ շարքերում—ձեռքով: Մոլախոտերով ավելի քիչ ծածկված հողափերսերում օարբամիջերի քաղհանը պես ե կատարել յեթե անգամ, իսկ օարբերի քաղհանն՝ յերկու անգամ: Մոլախոտերով ավելի ծածկված հողերում օարբամիջերի քաղհանավարը պես ե կատարել 4 անգամ, իսկ օարբերի քաղհանն՝ յերկու անգամ:

Յերբեմն անում են յերկու քաղհանավար, բայց դա թույլատրելի յե միայն մաքուր հողերում: Իսկ մոլախոտերի ներկայությամբ դեպքում, վորպեսզի հողաշերտն ավելի լավ պատրաստենք հացահատիկների ցանքի համար, անհրաժեշտ ե կատարել յերբ քաղհանավար: Քաղհանը պետք ե կրկնել հաճախ 15—18 որից հետո: Առաջին քաղհանը պետք ե կատարել վոչ ավելի, քան 7—8 որովա ընթացքում: Շարքամիջերի մշակման հետ միաժամանակ անհրաժեշտ ե քաղհանել նայել օարբեր:

Շարքահերկ բույսերի թե շարքամիջերի և թե շարքերի ժամանակին և ուշադիր քաղհանի վրա պետք ե շատ մեծ ուշադրություն դարձվի: Պետք ե հաշվի առնել այն մեծ դերը, վոր խաղում ե շարքահերկ բույսերի քաղհանը և այն ել վոչ միայն առաջին յերկու մշակումը, այլև 3-րդ ու 4-րդ մշակումները: Նրանք կարելի են վոչ միայն շարքահերկերի բարձր բերք ստանալու համար, այլև հողաշերտն ամենալավ կերպով պատրաստելու աշխատանքի և դարձանագան հացահատիկների համար: Շարքամիջերի 3-րդ և 4-րդ մշակումներն զգալիորեն հեշտացնում են հողաշերտի նախացանքային պատրաստությունն աշխատանքի և դարձանագան հացահատիկների համար և հնարավորություն են տալիս ալագ ու իր ժամանակին անցկացնել ցանքը:

Շարքահերկերի մշակումը սաստիկ հեշտանում ե այն ժամանակ, յերբ կատարված ե փնջային շախմատածել ցանք: Վերջինս հնարավորություն ե տալիս անցկացնել ձիամշակում կամ տրակտորամշակում վոչ թե մի, այլ մի քանի ուղղություններով:

Շարքերի քաղհանի հետ միաժամանակ, յեթե անհրաժեշտ լինի, պետք ե կատարել նայել ծիլերի պնկումը (նոսրացումը): Պոկման ժամկետերը, նույնպես և նոսրացման ժամանակ բույսերի միջով թողնվելիք տարածությունները, ինչպես և առանձին բույսերի խնամքի մյուս առանձնահատկությունները նկարագրվելու յեն հետևվյալ գլխում:

Ուսելով շարքահերկ և տեխնիկական բույսերի ընդհանուր խնամքի մասին, անհրաժեշտ ե նկատել, վոր բոլոր աշխատանքները (շարքամիջերի մշակումը, շարքերի քաղհանը և նոսրացումը) պետք ե կատարվեն իր ժամանակին և ըստ վորակի լավ:

Ամենից առաջ բույսերը քաղհանելիս պետք ե ուշադրություն դարձնել, վոր քաղհանավարիչի աշխատող մասերը ծի-

լերին շատ սուտիկ չանցնեն և չվնասեն նրանց արժանները: Քաղհանավարիչները աշխատող մասերը պետք է անցնեն վոչ ավել, քան բույսից 10—12 սմ. մոտիկությամբ, ըստ վորում մշակելիս արեւմաճողի և առհասարակ ուղղաձիգ արձատներ ունեցող բույսերի հեռավորությունն ավելի քիչ կարող է լինել, իսկ այնպիսի բույսերինը, ինչպես յեղիպտացորենն և— ավելի շատ կարող է լինել: Մշակման ժամանակ պետք է հետեւել, վոր արձատները չվնասվեն և բույսերը չթաղվեն: Մոլախոտերը կտրելու համար պետք է գործածել քաղհանադանակներ, իսկ այն դեպքերում, յերբ հարկավոր է լինում միայն փխրացնել, այդ դանակները փոխարինվում են փխրացնող թաթիկներով: Դանակները պետք է լավ սրված լինեն: Մշակումը քաղհանավարիչով չպետք է խորը կատարվի, վորպեսզի հողակերտը չչորանա: Առաջին անգամ 5—6 սանտիմետրից խորը չպետք է մշակել քաղհանիչներով: Յերկրորդ, յերրորդ անգամ մշակելիս քաղհանիչները պետք է թողնել վոչ ավել, քան 4 սանտիմետր և պակաս խորությամբ: Այնուհետեւ քաղհանիչի աշխատող մասերն այնպես պետք է դասավորել, վոր նրա անցնելուց հետո ակոսներ չստացվեն, վորոնք ուժեղ կերպով չորացնում են հողաշերտը:

Անհրաժեշտ է հետեւել, վոր ծիւրերի պոկումը (նոսրացումը) շարքերում կատարվի ժամանակին, առանց ուշացման, պոկելու ժամանակ պահպանվեն ամենալավ հեռավորությունները բույսերի միջեւ (հեռավորությունները ցույց են տրված հետեւյալ զլխում): Բացի այդ, պետք է հեռացնել ավելի թույլ բույսերը, իսկ ավելի ուժեղները թողնել: Ավելորդ բույսերի հեռացումը պետք է կատարվի զգուշությամբ, վորպեսզի ավելորդ ծիւրերի հետ չհեռացվեն նրանք, վորոնք մնալու յեն: Մասնավորապես զենագերչակը նոսրացնելիս, ավելորդ բույսերն անհրաժեշտ է կտրել, վորովհետեւ նրանց պոկումով կպոկվեն նայեւ հարեւան ծիւրերը, վորոնք պետք է մնան:

Նպատակ ունենալով արագացնել աշխատանքները և կրճատել աշխատանքի քանակը, վորը պետք է շարքահերկ բույսերի մշակման համար, վերջին ժամանակ կոլտնտեսություններում և խորտնտեսություններում սկսեցին գործադրել շարքահերկ բույսերի շարքերի մշակումը լայնությամբ: Քաղհանավարը կատարվում է կարճ ընդմիջումներից հետո և այդպիսով շարքերում կադմվում են ծիւրերի առանձին փնջեր (բներ), վորոնք արդեն մշակվում են ձեռքով: Այդ աշխատանքը կա-

տարվում է հատուկ փորիչներով, նույնպես և ձիու և տրակտորի քաղհանիչներով:

Խնամքի ինչպիսի՞ միջոցներ են պահանջվում առանձին Շաբաների բույսերի համար:

Կանգ առնենք առանձին շարքահերկ և տեխնիկական բույսերի խնամքային աշխատանքների առանձնահատկությունների վրա:

Այդ խմբի բույսերից նայենք ամենակարեւոր բույսերը:

Յեգիպտացորեն: Մկսած յեգիպտացորենի ցանումից մինչև նրա ծիւրերի ամրացումը հաճախ նրան մնասում են թռչունները (զլխավարապես ագռափները և ճայերը): Դրա համար անհրաժեշտ է ցանքից հետո և մինչև առաջին քաղհանը ուշադրությամբ հսկել ցանքսերը: Թռչունների հարձակման դեպքում պայքարի հուսալի միջոց հանդիսանում է կրակոցով նրանց վախեցնելը: Նույնպես պետք է նկատի ունենալ և այն, վոր թռչունները քիչ կվնասեն յեգիպտացորենը, յեթե ցանքի ժամանակ նրա սերմերը խորը թաղվեն: Սերմերը պետք է թաղել 10 սանտիմետր խորությամբ:

Յեգիպտացորենի ցանքի խնամքի ամենակարեւոր միջոցը հանդիսանում է փոխումը, վորը պետք է կատարել ծիւրերի յերեւալուց հետո: Փոխելուց մի քանի որ հետո պետք է անցնել շարքամիջերի քաղհանավարին և շարքերի քաղհանին: Առաջին քաղհանը պետք է անցկացնել, մինչև ծիւրերը կհասնեն 65 սանտիմետր բարձրության: Մի քանի ժամանակ հետո, մոլախոտերի հետզհետե յերեւալուց հետո կատարվում է յեգիպտացորենի յերկրորդ՝ իսկ յերեւմ ել՝ և յերրորդ քաղհանը:

Առաջին և յերկրորդ քաղհանի ժամանակ անդի յե ունենում նաև բույսերի նոսրացումը: Նոսրացումը չի կատարվում միանգամից, այլ յերկու անգամ. առաջին անգամ այն հեռավորության կեսը, վոր պիտի թողնվի բույսերի միջեւ, իսկ յերկրորդ անգամ նոսրացվում է արդեն լրիվ հեռավորությամբ: Նոսրացման ժամանակ բույսերը թողնում են շարքամիջերի լայնության համեմատ: Իսկ յեգիպտացորենի շարքամիջերի լայնությունը վորոշված է 90 կամ 100—105 սանտիմետր (այդպիսի հեռավորություն հանձնարարում և Յերկրկոլտնտեսությունը—(«Գյուղատնտեսական բույսերի մշակման վորակական ցուցիչների ագրոկանոնները և ստանդարտները»-գիրք առաջին—դաշտային բույսեր):

Յեթե շարքամիջերի հեռավորությունն 90 սանտիմետր է, վերջնական պոկման (նոսրացման) ժամանակ բույսերը

պետք է գտնվեն մեկը մյուսից 30—35 սանտիմետր հեռու (յերաշտային ռադիոներում 35 սանտիմետր, իսկ խոնավ ռադիոներում—մոտ 30 սանտիմետր)։ Շարքամիջերը 100—105 սանտիմետր լինելու դեպքում, բույսերի հեռավորությունը շարքերում թողնվում է մոտավորապես 25—30 սանտիմետր։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր յեգիպտացորենը խնամելիս հարկավոր է շեղատերեւները կտրել և ծայրափունջը պոկել։

Յեգիպտացորենը խնամելիս անհրաժեշտ է նաև ուշադրութուն դարձնել փոշեսուսկի դեմ պայքարելու վրա, վորը վտանգավոր սնկային պարազիտներից է։ Փոշեսուսկերի տեսակներից ամենից հաճախ յեգիպտացորենին վնասում է բշտիկավոր փոշեսուսկը։ Նա բնորոշ է նրանով, վոր բույսի զանազան մասերում առաջացնում է հատուկ ուռեցքներ կամ բշտիկներ։ Վերջիններս լցված են լինում մուգ փոշեառ բեղմնիկներով (споры)։ Փոշեսուսկը հասնելիս բշտիկները ճաքում են և անագին քանակութամբ բեղմնիկները ցնդում են։ Նրանք բնկնում են առողջ յեգիպտացորենի վրա և վարակում են նրան։ Բշտիկավոր փոշեսուսկի դեմ պայքարելու միջոցն այն է, վոր հեռացվեն հիվանդ բույսերը դաշտից և այրվեն։ Այդ բանը պետք է կատարել մինչև բշտիկների բացվելը, քանի դեռ նրանք չեն ճաքել։

Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր յեգիպտացորենը, ինչպես նաև մյուս շարքահերկ բույսերն, ունեն ուրիշ հիվանդութուններ և վնասատուներ։ Ներկա բրոշյուրում կանգ չառնելով նրանց վրա, անհրաժեշտ ենք համարում ցույց տալ, վոր նրանց յերեւալու դեպքում կոտմտեսութունները և կոտմտեսականները պետք է անմիջապես դիմեն մոտակա մեքենական վոչնչացնող կայանը կամ տեղական գյուղատնտեսին՝ ոգնութուն ստանալու համար։ Շատ կարեւոր է նաև զանազան վնասատուների և հիվանդութունների դեմ պայքարելու դեպքում ճիշտ և իր ժամանակին գործադրել վորոշված ագրոտիկական միջոցներ, ինչպես որինակ, հողի մշակումը ժամանակին, ճիշտ և իր ժամանակին կատարված ցանքը, բույսերի լավ խնամքը, մոլախոտերի լավ հեռացումը, շրջանացանի մուծումը և մյուսները։

Արեւմադղիկ։ Արեւմադղիկ ծիւրը նույնպես հանձնարարվում է փոցիւել։ Փոցիւելը պետք է սկսել յերբ հայտնվի բույսի իսկական տերեւների առաջին զույգը։ Արեւմադղիկ այն տարածութունները, վորոնք պետք է մշակել քաղհանվարիչներ-

ըով առաջին հերթին, կարելի չէ չփոցիւել։ Փոցիւելուց մի քանի որ հետո պետք է կատարվի քաղհանը և նրա հետ միաժամանակ բույսերի պոկումը (նոսրացումը) շարքերում։ Յիթե արեւմադղիկ ծիւրին չեն սպառնում վնասատուները, այն դեպքում նոսրացումը կարելի չէ անել մի անգամով, այսինքն այնքան հեռավորությամբ, վորը պետք է թողնվի բույսերի միջով շարքերում։ Պոկումը չպետք է ուշացնել մինչև վայր մոմենտը, յերբ կհայտնվի իսկական տերեւների յերկրորդ զույգը։ Մոտ 60 սանտիմետր շարքամիջերի դեպքում (շարքամիջերի այդպիսի լայնութունն արեւմադղիկ համար հանդիսանում է նորմալ) բույսերը պետք է թողնել շարքերում 35—40 սանտիմետր հեռավորությամբ (յերկրամասի խոնավ ռադիոներում մոտ 35 սանտիմետր, իսկ յերաշտային ռադիոներում 40 սանտիմետր)։

Այն դեպքում, յերբ արեւմադղիկ ծիւրին սպառնում են վնասատուները, բույսերի պոկումը (նոսրացումը) շարքերում առաջին քաղհանի ժամանակ անում են վոչ թե լրիվ հեռավորության չափով, այլ այդ հեռավորության կիսով, իսկ լրիվ հեռավորության չափով պոկում են յերկրորդ քաղհանի ժամանակ։ Իսկ յերկրորդ քաղհանը կատարվում է, յեթե հողամասում յերեւան մոլախոտեր։ Յերկրորդ քաղհանը սովորաբար պետք է կատարել, յերբ արեւմադղիկ բարձրութունը հասնում է մոտ 26 սանտիմետրի, մոլախոտեր բուսած հողերում, իսկ հատկապես խոնավ յեղանակին անհրաժեշտ է լինում նաև յերրորդ քաղհանը։

Գեմագերչակի։ Գեմագերչակի առաջին քաղհանը պետք է կատարել վոչ ուշ, քան իսկական տերեւների առաջին զույգի յերեւալը։ Այնուհետև մոտավորապես 15 որ անցնելուց հետո անհրաժեշտ է կատարել գեմագերչակի յերկրորդ քաղհանը։ Յերկրորդ քաղհանի հետ միաժամանակ անհրաժեշտ է նոսրացնել բույսերը։ Գեմագերչակի նոսրացման ժամանակ, ինչպես վերելում արդեն ցույց է տրվել, ավելորդ բույսերը չպետք է արմատահանվեն, այլ կտրվեն։ Գոնադերչակի համար վորոշված 90—100 սանտիմետր շարքամիջերի տարածության դեպքում, բույսերը շարքերում պետք է թողնել իրարից 40 սանտիմետր հեռավորության վրա։

Այն դեպքում, յերբ կատարված է փնջաձև ցանք—90X90 սանտիմետր հեռավորությամբ, յուրաքանչյուր փնջում (բնում) պետք է թողնել յերկուական բույս։ Գեմագերչակի հետագա քաղհանները պետք է կատարել, ինչպես մյուս շարքահերկ

բույսերի քաղհանները: Ըստ վորում գյուղատնտեսական կա-
յաններին տվյալների համաձայն, պետք է զենագերչակը մշա-
կել 3 անգամից վոչ պակաս: Գաղհանի կարիքը սովորաբար
չի զգացվում այն ժամանակ, յերբ զենագերչակի բույսերը հա-
մախմբվում են և սկսում են ծաղկել:

Ծխախոտ: Ծխախոտի տնկումից հետո շուտով պահանջ-
վում է նրա մշակումը, քաղհանը շարքամիջերում և շարքերում:
Դրանից մոտավորապես 15 օր հետո կատարվում է և յերկրորդ
մշակումը: Յերկրորդ քաղհանից հետո անհրաժեշտության
դեպքում անում են և յերրորդ քաղհանը: Յերկրորդ քաղհանի
ժամանակ պետք է կատարել նայել բույսերի հողակիրտումը:
Հողակիրտումը մեծ ոգուտ է տալիս նրանց. ավելանում են նոր
լրացուցիչ արմատներ, իսկ շնորհիվ դրան ուժեղանում են բույ-
սերի սնունդը. բացի այդ, բույսերը հողակիրտումից հետո ավելի
կայուն են դառնում:

Ծխախոտի խնամքի հատուկ աշխատանքներից պետք է
մատնանշել ծայրահատումը և շեղատերեվահատումը: Ծայրահատ-
ման ժամանակ հեռացնում են բույսի կատարը ծաղիկների
հետ միասին: Պարարտ հողերում չի հանձնարարվում կատարել
ծխախոտի ծայրահատում: Շեղատերեվահատման ժամանակ
կտրում են կողմնակի ցողունների տերեվները:

Ծայրահատումն ու շեղատերեվահատումը նպաստում են
ծխախոտի տերեվների լավագույն զարգացմանը:

Գեոսախնձոր: Այն դեպքերում, յերբ գետնախնձորի ծիլե-
րի յերեվալու ժամանակ առաջանում է հողակեղեվ, ոգտակար է
փոցխել: Այնուհետև հենց վոր սկսում են յերեվալ մուլախո-
տերը, անհրաժեշտ է սկսել գետնախնձորի քաղհանը: Գետնա-
խնձոր պետք է քաղհանել յերկու, յերեք անգամ,

Գետնախնձորը պետք է տնկել հետակյալ հեռավորու-
թյան վրա—շարքամիջերի տարածությունը 60 սանտիմետր,
իսկ շարքերում 30 սանտիմետր:

Սոնավ ռայոններում բացի այդ, անում են և հողակի-
տում: Սովորաբար հողակիրտումն անում են յերկու կամ յերեք
անգամ (շատ նպաստավոր յեղանակներին): Այդ աշխատանքն
սկսում են, յերբ գետնախնձորի բույսը հասնում է 20 սանտիմե-
տր բարձրության: Հողակիրտումը խոնավ ռայոններում հան-
դիսանում է ոգտակար միջոց և բարձրացնում է պալարների
բերքը: Վերջին հողակիրտումը պետք է կատարվի գետնախնձորի
ծաղկելուց առաջ: Գետնախնձորի հողակիրտումը պետք է կա-

տարել անձրեվից հետո: Այդ աշխատանքը կատարվում է ձիա-
կախիչների ոգնությամբ:

Յերաշտային ռայոններում կարիք չկա հողակիրտել գետ-
նախնձորը, վորովհետև նա չի ավելացնում գետնախնձորի բեր-
քը, իսկ ավելի լավ է խորունկ տնկել գետնախնձորը—մոտ
10 սանտիմետր խորությամբ: Յերաշտային ռայոններում հո-
ղակիրտումը սաստիկ չորացնում է հողաշերտը և այն հետեվանքն
է ունենում, վոր պալարների քանակը չի ավելանում և գետ-
նախնձորն ավելի վատ է զարգանում:

Բուսաճնային բույսեր: Բուստանային բույսերի խնամքին
նույնպես պետք է անցնել անմիջապես ծիլերի յերեվալուց
հետո: Սովորաբար պետք է անցկացնել յերեք, իսկ յերբեմն
էլ չորս քաղհան:

Յեթե մուլախոտերը հայտնվում են փաթաթուկների զար-
գացումից հետո, յերբ շարքամիջերի մշակումը դժվարանում
է, այն դեպքում սինչել փաթուկների լիովին միանալը կա-
տարվում է ձեռքի քաղհան:

Բուստանային բույսերի նոսրացումը հանձնարարվում է
կատարել յերեք անգամից: Դա անհրաժեշտ է հետեվյալ նկա-
տառումներով: Բուստանային բույսերն ունեն զանազան տե-
սակի վնասատուներ (միջատներ, սնկային հիվանդություններ),
վորոնք կարող են հասցնել զգալի վնաս և յեթե նոսրացումը
կատարվի մի անգամից, այն դեպքում, բույսերի վնասման հե-
տեվանքով բուստանն ավելի յե նոսրանում: Վերջին նոսրա-
ցումը կատարվում է պտղաբաժակի կաղմվելուց առաջ:

Առաջին նոսրացումը կատարվում է առաջին քաղհանի
ժամանակ:

Վերջնական նոսրացումից հետո հանձնարարվում է
բույսերի հետեվալ հեռավորությունն իրարից:

1. Ձմերուկ (շարքամիջերի հեռավորությունը 175—200 սանտիմետր)
— 140—175 սանտիմետր հեռու իրարից:

2. Սեխ (շարքամիջերի հեռավորությունը 140—200 սանտիմետր)—
100—200 սանտիմետր:

3. Ճաշարանային դում (շարքամիջերի հեռավորությունը 200—280
սմ.)—140—200 սանտիմետր: Առաջին նոսրացման ժամանակ և շարքացա-
նով ցանելիս բույսերը թողնում են մոտավորապես իրարից 20 սանտի-
մետր հեռավորության վրա, իսկ յերկրորդ նոսրացման ժամանակ մոտ 40
սանտիմետր:

Յույց տված հեռավորությունները (շարքամիջերում և
շարքերում) ճշտվում են տեղական պայմանների համաձայն,
ըստ տեսակների, նույնպես և ըստ մեքենական մշակման ժա-
սանակ յեղած հարմարությունների:

Փնշային ցանքի ժամանակ վերջնական նոսրացումից հետո թողնում են մի-մի բույս:

Անհրաժեշտ է մատնանշել, վոր կերի նպատակով մեր յերկրամասում մշակում են կերի դրում և կերի ձմերուկ: Իրենց խնամքի ձեվով նրանք նման են քիչ առաջ նկարագրած բույսերին: Տարբերությունն այն է, վոր նրանց նոսրացումը կարելի չէ անել յերկու անգամից: Իսկ նրանց քաղհանը պետք է կատարել յերկու-յերեք անգամ: Բույսի վերջնական նոսրացումից հետո թողնվում են հետեվյալ հեռավորությունները— շաքամիջերում 2,5 մետր, իսկ շաքերում—2 մետր:

Կերի ճակնդեղ: Կերի ճակնդեղը խնամելու աշխատանքն սկսվում է սովորական ձեվով Ընդամենը պետք է կատարել յերեք—չորս մշակում ամառվա ընթացքում: Կերի ճակնդեղը, ինչպես և շաքարի ճակնդեղը, նույն-չես պահանջում է քաղհան իր ժամանակին և խնամքով: Կերի ճակնդեղի ծիլերի նոսրացումը (պոկումը) կատարվում է, յերբ յերեվում են բույսի հինգ տերեվները: Նոսրացման ժամանակ բույսերը թողնում են 20 սանտիմետր հեռավորության վրա: Ողորդ տեսակների համար, ինչպես Եկկենդորյան դեղին ու կարմիր և Արնի-կրիվենյան տեսակներն են, հեռավորությունն ավելանում է (կերի ճակնդեղի շաքամիջերի հեռավորությունը 60 սանտիմետր է):

Հասիկային լոբեցեղ բույսեր (լոբի, սիսեռ): Հատիկային լոբեցեղ բույսերի ցանքերը մշակվում են յերկու, հազվադեպ դեպքում, յերեք անգամ: Առաջին քաղհանը հարկվում է սկսել մի քիչ վաղ: Հատիկային լոբեցեղ բույսերի շաքամիջերի տարածությունը հասնում է 50-60 սանտիմետրի, վորը թույլ է տալիս ձիով մշակել այդ բույսերը:

ԶԻԱՔԱՂՀԱՆԱՎԱՐԻ ՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Շարքահերկ է տեխնիկական բույսերի մշակումն անց ե կացվում ձեռքով, այսինքն՝ ձեռքի չափայի միջոցով, հետո ձիու կամ տրակտորի քաղհանիչների միջոցով (շաքերը մշակելով ձեռքով): Ձեռքի քաղհանն ամենաքիչ արտադրական աշխատանքն է: Մի հեկտար մի որում քաղհանելու համար հարկավոր են 8—20 մարդ, իսկ շատ սաստիկ մոլախոտեր լինելու դեպքում—ավելի մարդ: Իհարկե ներկայումս շարքահերկ և տեխնիկական բույսերի մեծ տարածությունների դեպքում ձեռքի քաղհանը մեր կոլտնտեսություններում և խորհրտնտեսություններում կարող է ունենալ չնչին, սահմանափակ նշա-

նակություն: Շարքահերկ բույսերը խնամքով և ժամանակին ձեռքով քաղհանելու վրա չպետք է հույս դնել: Շարքահերկերի մշակումը լավ անցկացնելու համար անհրաժեշտ է ամենամեծ չափով ոգտագործել ձիու և տրակտորի քաղհանիչները:

Ձեռքի քաղհանը, բացի քիչ արտադրողականությունից և ահաղին աշխատավորներ պահանջելուց, ունի և ուրիշ թերություններ: Ձեռքաղհանի ժամանակ քաղհանողները ստիպված են մասամբ վտնակոխել իրենց քաղհանած տարածությունը: Բացի այդ, վոչ ամեն դեպքում ձեռքի չափայով հաղողվում է անհրաժեշտ չափով փխրացնել հողի վերին շերտը: Բացի այդ, շատ կեղտոտված լինելու դեպքում և բազմաձյա մոլախոտերի դեպքում (յերկար արմատներով և արմատապտուղներով) ձեռքաղհանը հանդիսանում է բավական դժվար գործ:

Այդպիսով շարքահերկ և տեխնիկական բույսերը ճիշտ և ժամանակին խնամելու նպատակով, քաղհանային աշխատանքները հեշտացնելու համար անհրաժեշտ է, վոր մենք ամեն կերպ ոգտագործենք բոլոր հնարավորությունները—կիրառելու ձիու և տրակտորային ուժը-շաքամիջերը մշակելու և բույսերը նոսրացնելու համար: Ըստ վորում պետք է նկատի ունենալ, վոր ամենից ձեռնտու և ամենից արդունավետ է հանդիսանում շարքահերկ բույսերը տրակտորով մշակելու ձևը:

Այս գլխում կանց առնենք ձեռքաղհանիչների աշխատանքի վրա: Նրանք համեմատած ձեռքաղհանին, ունեն բավական բարձր արտադրողականություն: Այդ արտադրողականությունն արտահայտվում է հետևյալ թվերով: Մեկ հասակավոր և մեկ պատանի մի ձիով քաղհանում են 2,5 հեկտար՝ շաքամիջերի 50 սանտիմետր լայնության դեպքում, 2 հեկտար շաքամիջերի 70 սանտիմետր լայնության դեպքում, իսկ ավելի մեծ շաքամիջերի դեպքում 2,5—3 հեկտար: Շարքամիջերի մշակումը ձեռքաղհանիչի միջոցով կարելի չէ կատարել, յեթե շաքամիջերի տարածությունը 50 մինչև 100 սանտիմետր է: Շարքահերկ բույսերի շաքերը մշակելու համար մի որում մի հեկտարին պահանջվում է 3—5 մարդ, յերբ շաքամիջերը մշակվում են ձիու քաղհանիչներով: Այդպիսով ձեռքաղհանի դեպքում աշխատանքի պահանջը կրճատվում է 2,5—3 անգամ, իսկ դա հնարավորություն է տալիս ավելի արագ անցկացնել քաղհանը:

Շարքահերկ և տեխնիկական բույսերը մշակելու համար գոյություն ունեն ձիակուլտիվատորների մի քանի տեսակներ: Նրանցից շատ մեծ նշանակություն ունի միաձի «պլա-

նետ» № 8 քաղհանավարիչը, վորը պատրաստվում է «Արմա-
լիտ» գործարանում: Նա սովորաբար ունի մի խումբ քաղհա-
նիչ դասակներ, փխրացնող թաթեր, իսկ յերբեմն ել—հողա-
կիտողներ: Հողակիտելու աշխատող մասերն ամրացվում են
այն դեպքում, յերբ անհրաժեշտ է հողակիտել բույսերը, որի-
նակ, դետնախնձորը, արաքիսը:

Քաղհանիչի աշխատող մասերի ընդգրկման լայնութունն
ու խորութունը կանոնավորելու համար կան յերկու լծակներ,
Նրանցից մեկը շնորհիվ շրջանակի շարժական միացմանը, կա-
նոնավորում է ընդգրկման լայնութունը, իսկ մյուս լծակի
ոգնութեամբ քաղհանիչն իջեցնում են ավելի խորը կամ ավե-
լի ծանծաղ:

Քաղհանիչի բոլոր մասերը ճիշտ և հաջող աշխատանքի
համար պետք է լիովին սարքված լինեն: Դասակները, թաթե-
րը և հողակիտողները պետք է մի հորիզոնական հարթութեան
վրա լինեն, այնուհետև անհրաժեշտ է, վոր բոլոր աշխատող
մասերը բավական լավ սրված լինեն և ճիշտ սարքադրված:

Անհրաժեշտ է իր կանգ առնել ձեռքի քաղհանիչները
ձիու միջոցով ոգտագործելու մասին: Բանն այն է, վոր ձեռքի
«պլանետ» քաղհանիչների արտադրողականութունը քիչ է,
նրանցով աշխատելը դժվար: Նրանց երտադրողականութունը
բարձրացնելու և աշխատանքը լավացնելու համար ձեռքի պը-
լանետները հարմարեցվում են ձիով քաշելու համար: Մի ձին
կարող է քաշել 1—3 քաղհանավարիչներ: Լծելու հարմարու-
թյան համար քաղհանավարիչներն ամրացնում են փայտի ձո-
ղին, իսկ ձողին լծում են քաշող ուժը: Մի որում այդպիսի
քաղհանիչներով (վորոնք բաղկացած են յերեք չորս ձե-
ռաքաղհանավարիչներից) կարելի չէ մշակել 2,5—3 հեկտար:

Ձեռքի քաղհանավարիչներն ավելի լավ է գործադրել
35—45 սանտիմետր լայնութեամբ շարքամիջերում, վորտեղ
հնարավոր չէ աշխատել ձիաքաղհանավարիչներով:

Ձիաքաղհանավարիչները կարելի չէ ոգտագործել վոչ
միայն շարքամիջերը քաղհանելու համար, այլև բույսերի շար-
քերը լայնութեամբ նոսրացնելու համար:

Հարմարեցրած շարքացաններն ու կուլտիվատորները կա-
րող են կիրառվել նաև բույսերի շարքերը լայնութեամբ նոս-
րացնելու համար:

Աշխատանքի ժամանակ քաղհանավարիչներին ուշադրու-
թեամբ պետք է հետևել: Ամենից առաջ պետք է հետևել, վոր
բոլոր քաղհանավարիչները լիովին սարքված լինեն: Շարքա-

միջերի մշակումը պետք է կատարել վոչ այնքան խոր, ինչ-
պես արդեն ցույց եր տրվել (վոչ խոր, քան 6 սանտիմետր):
Անհրաժեշտ է հետևել, վոր աշխատող մասերը չվնասեն շար-
քահերկ բույսերի արմատները:

ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՔԱՂՀԱՆԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Շարքահերկ բույսերի տրակտորային մշակումը տալիս է
ահագին ոգուտ: Տրակտորային մշակման դեպքում աշխա-
տանքի քանակը կրճատվում է 4—5 անգամ, ձեռքաղհանի
համեմատութեամբ:

Բացի այդ, տրակտորներին ոգտագործումը քաղհանի հա-
մար հնարավորութուն է տալիս շատ արագ անցկացնել շար-
քահերկ բույսերի աշխատանքի խնամքը, իսկ դա նպաստում է
շարքահերկ և տեխնիկական բույսերից ամենաբարձր բերք
ստանալ: Տրակտորային ուժը քաղհանային աշխատանքների
ոգտագործելու ժամանակ քիչ ուժ գործադրելով կարելի չէ
ձիւտ և միանգամայն ժամանակին անցկացնել շարքահերկերի
մշակումն զգալի տարածութեան վրա: Հետևաբար շարքահերկ և
տեխնիկական բույսերի մշակման մեքենայացումը և մասնա-
վորապես քաղհանային աշխատանքների մեքենայացումը մեղ
հնարավորութուն է տալիս ավելի արագ և հաջողութեամբ
լուծելու ներկայումս մեր յերկրամասի համար կարեւոր խնդ-
րերը, այն է՝ տեխնիկական բույսերի խնդիրը: Շնորհիվ խո-
շոր առավելութունների, տրակտորային քաղհանը մեղանում
տարեցտարի գործադրվում է ավելի ու ավելի: Թե ինչքան
մեծ է տրակտորային արտադրողականութունը քաղհանի ժա-
մանակ, հայտնի չէ հետևյալ տվյալներից: «Կարմիր Աքսայ»
գործարանի բազմաշարք կուլտիվատորների աշխատանքի դեպ-
քում (70 սանտիմետր շարքամիջերի լայնութեամբ) մի որում
կարելի չէ քաղհանել—¹⁰/₂₀ «Իստերնաքիտոնալով» —32 հեկ-
տար, «Փ. պ.» —27 հեկտար, «Փարմոլով» —32 հեկտար: Ստա-
լինգրադի տրակտորով և ¹⁵/₃₀ «Իստերնաքիտոնալով» կարե-
լի չէ քաղհանել 50 հեկտար:

Շարքահերկ բույսերի տրակտորային մշակումն ավելի հա-
ջող անցկացնելու նպատակով անհրաժեշտ է ընտրել կանոնա-
վոր ձևի հարթ հողամասեր: Դրա հետ միասին ցանկալի չէ,
վոր այդ հողամասերը լինեն յերկար: Բացի այդ, անհրաժեշտ
է, վոր շարքերի միջի տարածութունը լինի հավասար և բույ-
սերի շարքերը ճիշտ լինեն, նույնպես և շարքամիջերում տը-
րակտորը կարողանա անցնել իր անիվներով:

Տրակտորներին կցելու համար ոգտվում են ձիու կամ տրակտորի քաղհանիչներով: Տրակտորային հատուկ քաղհանիչներին աշխատանքն ավելի լավ է ստացվում, վորովհետև տրակտորներին շրջադարձը ձիու քաղհանավարիչներով ավելի դժվար է: Բացի այդ, ձիու քաղհանավարիչները տրակտորով ոգտագործելիս ավելի շատ աշխատավորներ են պահանջվում:

Կցվող ձիաքաղհանավարիչների քանակը կախված է տրակտորի հզորությունից: Այսպես, որինակ՝ «Փորձոն» Պուտիլովցի տրակտորին կարելի է կցել 6—7 միաձի քաղհանավարիչներ: Ստալինգրադի «Խնտերնացիոնալ»^{15/30} տրակտորին, «Ջոն»-դիրին—12 քաղհանավարիչներ: Միաձի քաղհանավարիչները տրակտորով աշխատեցնելու ժամանակ նկատի ունենալով, վոր տրակտորներն ավելի արագ են գնում, քան ձիերը, պետք է քաղհանիչների վրա դնել յերկու հերթի աշխատողներ: Տրակտորով բանեցվող միաձի կուլտիվատորները պետք է դասավորել շախմատաձև կարգով: Շարքամիջերը մըշակող տրակտորային կցորդ կուլտիվատորներից անհրաժեշտ է մատնանշել բազմաշար № 8 կուլտիվատորը, - վորը ներկայումս արտադրում է Ռոստովի «Կարմիր Աքսայ» գործարանը:

Նա կարող է ոգտագործվել թե շարքամիջային մշակման, թե բույսերի նոսրացման համար շարքերում: Նա լավ է աշխատում: Այդ կուլտիվատորը բաղկացած է մի յերկաթյա շրջանակից, վորի վերին մասին (վերին ձողին) ամրանում են անիվների կիսաառանցքներն ողակներին ողնությամբ: Իսկ շրջանակին ներքևի մասին շարժական հատուկ ողակներով ամրանում է մի շրջանակ, պահելու համար աշխատող մասերը (թաթերը, հողակիտողները): Կուլտիվատորն ունի յերկու լծակ—աշխատող մասերը բարձրացնելու և իջեցնելու համար: Կուլտիվատորը կարող է աշխատել, յերբ շարքամիջերի տարածությունը 50—100 սանտիմետր է: Նրա ընդդրկման լայնությունը մոտ 3 մետր է:

Բացի կցորդ կուլտիվատորներից, վորոնցից ամենամեծ նշանակություն ունի «Կարմիր Աքսայ» գործարանի քիչ առաջ նկարագրված բազմաշար կուլտիվատորը, կան նաև կախվող կուլտիվատորներ: Վերջիններս կախվում են հատուկ տրակտորներին, ինչպես որինակ «Փարմո», «Բեյս», «Ուլիվեր»:

Այդպիսի տրակտորակուլտիվատորներն ավելի հարմար է կառավարել: Հետո նրանց շրջանակները հողից բավական բարձրացած են և նրանցով կարելի է մշակել բոլոր բույսերը, ներառյալ և բարձրացողուն շարքահերկ բույսերը: Աշխատող

մասերի ընթացքի խորութունը կարգավորվում է լծակների ոգնությամբ: Հիշված տրակտորները քաղհանի համար հարմարվում են նրանով, վոր նրանց քաշող անիվները դասավորվում են լայն, իսկ առաջին անիվները մոտենում են կամ փոխադրվում են մի անիվով: Այդ կուլտիվատորների թերությունը նրանց քիչ արտադրողականությունն է: Նրանք խորհրդային Միության մեջ չեն արտադրվում: Այդպիսի կուլտիվատորներ քիչ քանակությամբ ներմուծված են արտասահմանից. առավելագույն «Փարմո» տիպի: Նա կարող է աշխատել, յերբ շարքամիջերի լայնությունը հասնում է 50 և ավելի սանտիմետրի: Նրանք ոգտագործվում են բամբակի և ուրիշ բույսերի քաղհանի համար:

Մասնավորապես մեծ հաջողություն ունեցավ գյուղատնտեսության մեքենայացման համաթիւթենական ինստիտուտն—Ստալինգրադի տրակտորները քաղհանային աշխատանքներին հարմարացնելու նկատմամբ: Այդ հարմարեցման ելությունը հետեվյալն է—Ս. Տ. գործարանի սովորական տրակտորի քաշող անիվները փոխարինում են ավելի նեղողակ անիվներով, առաջին անիվները փոխարինում են յերկու իրար մոտեցած անիվներով կամ մի անիվով (թե մեկ և թե յերկու իրար մոտեցած անիվներն անցնում են մի շարքամիջով): Այնուհետև դեկի մոտ գրվում են լրացուցիչ քաշողներ: Մատնանշած հարմարեցման հետեվանքով տրակտորի մարմինը սովորականից ավելի է բարձրանում, մինչև 70 սանտիմետր, իսկ դա նրանց հնարավորություն է տալիս կատարելու վոչ միայն առաջին և յերկրորդ քաղհանը, այլ և յերրորդ քաղհանը:

Ս. Տ. գործարանի հարմարեցրած տրակտորը կարող է աշխատել 40-110 սանտիմետր լայնության շարքամիջերում և այդպիսով կարելի է նրա միջոցով մշակել բոլոր շարքահերկ և տեխնիկական բույսերը:

Բայց անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր շարքահերկ բույսերի մշակման համար կարելի է գործադրել և սովորական տրակտորները, առանց հատուկ հարմարեցման: Սովորական տրակտորներին կցվում են ձիու կամ տրակտորի քաղհանիչները: Բայց այդ տրակտորները հնարավորություն չեն տալիս կատարել շատ շարքահերկ և տեխնիկական բույսերի յերրորդ քաղհանը, վորովհետև նրանց մարմինները համեմատաբար ցածր են նստած: Բացի այդ, շարքահերկ բույսերի համար կիրառվող բոլոր շարքամիջերը հնարավորություն չեն

տալիս սովորական անիվներ ունեցող տրակտորներին անցնելու: Մեղանում ավելի հաճախ կիրառվող շարքամեջերը հետևյալ ստանդարտն ունեն — 60, 70, 90, 100 սանտիմետր լայնությունների: Մեր ունեցած տրակտորներից քաղհանի համար կարելի չե գործադրել Ստալինգրադի Տ. գործարանի 10/20, 15/30 և 22/36 ուժի «Ինտերնացիոնալ» և «Ֆ. Պ.» տրակտորները, յեթե շարքամեջերի լայնությունը 60 սանտիմետր ե կամ 70 սանտիմետր. այդ դեպքում կարելի չե գործադրել և «Ջոն-Դիրը»: Իսկ յեթե շարքամեջերի տարածությունը 90 սանտիմետր ե, կարելի չե գործադրել 10/20 «Ինտերնացիոնալը» և «Ֆ. Պ.» 100 և ավելի սանտիմետր շարքամեջերում կարելի չե գործադրել մեղանում յեղած բոլոր տրակտորները: Ս. Տ. գործարանի տրակտորը լրացուցիչ հարմարություններով, ինչպես վերելում ժատնանշվեց, կարող ե մշակել 50—90 սանտիմետր ունեցող շարքամեջերը:

Այն դեպքում, յերբ շարքահերկ բույսերի շարքամեջերն ագլոտեխնիկական նկատառումներից ստիպված սարքվում են այնպես, վոր չեն համապատասխանում մեղանում գոյություն ունեցող տրակտորների պահանջներին, այդ դեպքում պետք ե ցանքի ժամանակ շարքամեջերն այնպիսի լայնություն անել, վոր տրակտորն անցնելիս բույսերը չվնասվեն: Ընդ սմին պետք ե նկատի ունենալ շարքամեջերի այնպիսի լայնությունը, վոր տրակտորի անիվներն անցնելիս շարքերի բույսերից հեռու գտնվեն վոչ պակաս, քան 12,5 սանտիմետր:

Տրակտորային մշակման ժամանակ վոչ մի դժվարություն չլինելու համար, հենց ցանքի ժամանակ պետք ե հաշվի առնել, թե ինչպիսի տրակտորով ե լինելու շարքահերկ բույսերի քաղհանը և դրանից կախված պետք ե շարքամեջերը հարմարեցնել անիվներին անցնելու համար: Յեթե ցանքի ժամանակ դա չի արվել, տրակտորներ ընտրելիս պետք ե առաջնորդվել վերելում բերված ցուցմունքներով տրակտորների կիրառման վերաբերյալ—տարբեր շարքամեջերի դեպքում:

Վերջում պետք ե ասել, վոր մենք ներկա մոմենտում շարքահերկ բույսերի մշակման համար տրակտորային ուժ գործադրելու վերաբերմամբ մեծ հնարավորություններ ունենք: Այդ գործում ավելի մեծ հաջողություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ ե մեր մասնագետների, գիտնականների, կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների գործնական աշխատողների ուշադրությունը հրավիրել այդ գործի վրա: Պետք ե հաշվի առնել տրակտորային մշակման վերաբերյալ

մեր բոլոր գիտական-հետախուզական հիմնարկների, շրջանային փորձակայանների, խորհրտնտեսությունների ՄՏԿ և կոլտնտեսությունների ունեցած բոլոր նվաճումները և սոցիալիստական գյուղատնտեսություն աշխատողների ռացիոնալացնող միտքն ուղղել այդ հարցն ավելի խորը մշակելու համար:

Մեր Հ. Կովկասի խորհրդային գյուղատարաններից մեկը—ընկեր Ուսատովն արդեն դուրս ե հողը մշակող ու ցանող «կոմբայն», վորն ունի փոխվող մասեր և կարող ե հարմարվել զանազան աշխատանքներ կատարելու համար—ցանք, քաղհան, ցողնաստվելում, հողաշերտի խտացում (дискование)

Այդ գյուտն արդեն նայել և հավանություն են տվել գիտական—հետախուզական հիմնարկները:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր գիրքը քաղհանային աշխատանքների կազմակերպման մասին թերի կլինի, յեթե մենք մի անգամ ել չհիշեցնենք մեր ընթերցողներին, վոր քաղհանային կամպանիայի հաջողությունը վերջին հաշվով վճռվում ե արտադրական սկզբունքով կազմված բրիգադում:

Վերելում մենք արդեն ասել ենք, թե ինչպես ե կազմվում այդ բրիգադը և վորոնք են նրա խնդիրները: Անհրաժեշտ ե մի անգամ ել կանգ առնել բրիգադների կազմի վորակի և բրիգադիւրների ընտրության վրա: Բրիգադի անդամների ընտրությունը պիտի միանգամայն լրջությամբ վերաբերվել: Բրիգադը կոլտնտեսության հիմնական արտադրական վոդնաշարն ե: Այնտեղ պետք ե մտնեն լավագույն արտադրիչները, հարվածայինները, սոցմրցման և հարվածայնություն մասնակցողներն ու կազմակերպիչները:

Ել ավելի մեծ ուշադրություն պետք ե մոտենալ բրիգադիւրների ընտրությանը, վորպես կոլտնտեսային արտադրության վարպետների: Բրիգադիւրն ամենից առաջ պետք ե լինի տրտեսապես փորձված, կոլտնտեսականների աչքում հեղինակություն ունենա, լինի սոցմրցման և հարվածայնության նախաձեռնող ու կազմակերպող, մարտնչի կուսակցություն գլխավոր գծի համար, կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրացման համար:

ՀԿԿ(բ) Կենտկոմն իր 1932 թվի փետրվարի 4-ի վորոշումով ուղղակի ցույց ե տալիս, վոր բրիգադիւրների ընտրու-

թյունը, նրանց կազմի հոսունությունը և բրիգադերներին տնտեսական ու ֆաղափական վորակի բարձրացման գործում իսկական ոգնություն ցույց տալը պետք է կուսակցական կազմակերպությունների գլխավոր խնդիրը դառնա:

